

Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ

1 Գործառնությունների բնույթը և ընդհանուր տեղեկատվություն

«Սիլ Ինշուրանս» Ապահովագրական ՓԲԸ (այսուհետ՝ Ընկերություն) հիմնվել է 2000թ. ապրիլի 21-ին և հանդիսանում է փակ բաժնետիրական ապահովագրական ընկերություն՝ գործելով Հայաստանի Հանրապետության (այսուհետ՝ ՀՀ) օրենսդրության շրջանակներում: Ընկերությունը գրանցվել է 21.04.2000թ. ՀՀ կենտրոնական բանկի (այսուհետ՝ ՀՀ ԿԲ) կողմից N0033 արտոնագրային համարով: 25.03.2008թ. Ընկերությունը վերալիցենզավորվել է N0004 արտոնագրային համարով:

Ընկերությունը զբաղվում է ընդհանուր ապահովագրական գործունեությամբ Հայաստանի Հանրապետության տարածքում: Ընկերության կողմից կնքվող ապահովագրական պայմանագրերի հիմնական տեսակներն են՝ դժբախտ պատահարներից, ցամաքային տրանսպորտի, փոխադրվող գույքի, հրդեհից և բնական աղետներից, ցամաքային ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության, ընդհանուր պատասխանատվության ապահովագրությունը, ինչպես նաև առողջության և արտասահման մեկնողների աջակցության ապահովագրությունը: 2010թ-ից Ընկերությունը հանդիսանում է նաև Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրություն իրականացնող բյուրոյի անդամ և 2010թ. հոկտեմբերից կնքում է ԱՊՊԱ պայմանագրեր:

Ընկերության գլխավոր գրասենյակը գտնվում է Երևանում: Ընկերության իրավաբանական հասցեն է՝ ՀՀ, ք. Երևան, Արամի 3 և 5:

2 Գործարար միջավայր

Հայաստանում շարունակական բնույթ են կրում իրականացվող քաղաքական և տնտեսական բարեփոխումները: Հայաստանի տնտեսության կայունությունը և զարգացումը մեծապես կախված է այս բարեփոխումներից, ինչպես նաև Եվրասիական Միությունում զարգացումներից, որի հետ շարունակվում է ՀՀ տնտեսության ինտեգրումը:

Ընկերության ղեկավարությունը գտնում է, որ ընթացիկ պայմաններում իրականացվում են համապատասխան միջոցառումներ Ընկերության տնտեսական կայունությունն ապահովելու նպատակով:

3 Հաշվետվությունների պատրաստման հիմունքները

3.1 Համապատասխանությունը

Սույն ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են համաձայն Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ), որոնք հաստատվել են Հաշվապահական Հաշվառման Միջազգային Ստանդարտների Իտրիդի (ՀՀՄՍԻ) կողմից և Մեկնաբանությունների՝ հաստատված Ֆինանսական Հաշվետվությունների Մեկնաբանությունների Միջազգային Կոմիտեի կողմից (ՖՀՄՄԿ):

Ընկերությունը պատրաստում է իր հաշվետվությունները ՀՀ գործող օրենսդրության և հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների պահանջներին համապատասխան: Սույն ֆինանսական հաշվետվությունները հիմնված են Ընկերության

հաշվառման գրանցումների վրա, որոնք ճշգրտվել և վերադասակարգվել են ՖՀՄՍ-ին համապատասխանեցնելու նպատակով:

3.2 Չափման հիմունքները

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են իրական արժեքի սկզբունքի հիման վրա ֆինանսական արդյունքներով ճշգրտվող՝ իրական արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվների ու պարտավորությունների, ինչպես նաև վաճառքի համար մատչելի ակտիվների համար, բացառությամբ այն ակտիվների, որոնց իրական արժեքը հնարավոր չէ որոշել: Այլ ֆինանսական ակտիվներն ու պարտավորությունները հաշվառվում են ամորտիզացված արժեքով, իսկ ոչ ֆինանսական ակտիվներն ու պարտավորությունները՝ պատմական արժեքով բացառությամբ հիմնական միջոցների (փոխադրամիջոցներից բացի), որոնք ներկայացվում են վերագնահատված գումարով:

3.3 Գործառնական և ներկայացման արժույթ

Ընկերության գործառնական արժույթը դա այն հիմնական տնտեսական միջավայրի արժույթն է, որտեղ գործում է Ընկերությունը: Ընկերության գործառնական և ներկայացման արժույթ է հանդիսանում Հայաստանի Հանրապետության դրամը (այսուհետ՝ ՀՀ դրամ), քանի որ այս արժույթն է լավագույն կերպով արտացոլում ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած իրադարձությունների և Ընկերության գործարքների տնտեսական բովանդակությունը: Ֆինանսական հաշվետվությունները ներկայացված են ՀՀ դրամով՝ հազարների ճշտությամբ, եթե այլ բան նշված չէ: ՀՀ սահմաններից դուրս դրամը ազատ փոխարկելի չէ:

3.4 Հաշվապահական հաշվառման քաղաքականության և ներկայացման փոփոխություններ

Ընթացիկ տարում Ընկերությունն առաջին անգամ կիրառել է որոշ ստանդարտներ և փոփոխություններ, որոնք կիրառելի են 2017թ. հունվարի 1-ից կամ դրանից հետո սկսվող ժամանակաշրջանների համար: Ընկերությունն ավելի վաղ չէր ընդունել որևէ այլ ստանդարտ, մեկնաբանություն կամ փոփոխություն, որն ուժի մեջ էր մտել, բայց դեռ չէր կիրառվել: Չնայած ներքոհիշյալ ստանդարտներն ու փոփոխություններն առաջին անգամ կիրառվել են 2017թ-ին՝ դրանք, բացառությամբ ՖՀՄՍ 4 փոփոխությունների, որևէ էական ազդեցություն չունեն Ընկերության տարեկան ֆինանսական հաշվետվությունների վրա:

- *Բացահայտման նախաձեռնություն (ՀՀՄՍ 7 փոփոխություններ)*
- *Հեղաձգված հարկային ակտիվների ճանաչում չիրացված կորուստների համար (ՀՀՄՍ 12 փոփոխություններ)*
- *2014-2016թթ. ՖՀՄՍ-ների տարեկան բարեփոխումներ տարբեր չափանիշներով (ՖՀՄՍ 12 փոփոխություններ)*

3.5 Ընկերության կողմից դեռևս չկիրառվող ստանդարտներ և մեկնաբանություններ

Սույն ֆինանսական հաշվետվությունների հաստատման օրվա դրությամբ լույս են տեսել մի շարք նոր ստանդարտներ, գործող ստանդարտների վերաբերյալ փոփոխություններ և մեկնաբանություններ, որոնք դեռևս ուժի մեջ չեն մտել: Ընկերությունը վաղաժամկետ չի ընդունել այդ ստանդարտներից և մեկնաբանություններից որևէ մեկը:

Ղեկավարությունը կանխատեսում է, որ կիրառելի նոր ստանդարտներն ու մեկնաբանությունները կընդունվեն Ընկերության կողմից՝ դրանց ուժի մեջ մտնելու օրվան հաջորդող առաջիկա ժամանակաշրջանում:

Ղեկավարության կանխատեսմամբ այս փոփոխությունները էական ազդեցություն չեն ունենա Ընկերության ֆինանսական հաշվետվությունների վրա և ներկայացված են ստորև:

ՖՀՄՄ 4 «Ապահովագրության պայմանագրեր» փոփոխություն

ՖՀՄՄ 4 «Ապահովագրության պայմանագրեր» փոփոխությունները լույս են տեսել 2016թ. սեպտեմբերին և ուժի մեջ են մտնում 2018թ. հունվարի 1-ին և դրանից հետո սկսվող տարեկան հաշվետու ժամանակաշրջանների համար: Փոփոխությունները ներկայացնում են ՖՀՄՄ 9-ի («Ֆինանսական գործիքներ») ուժի մեջ մտնելու տարբեր ամսաթվերի և ապահովագրության պայմանագրերի նոր ստանդարտի հետ կապված խնդիրների լուծման երկու մոտեցում՝ վերակիրառման և հետաձգման: Վերակիրառման մոտեցումը հնարավորություն է ընձեռում ապահովագրության պայմանագրերի բոլոր թողարկողներին ճշգրտել շահույթ կամ վնասը համապատասխան ֆինանսական ակտիվների գծով՝ հեռացնելով ցանկացած լրացուցիչ հաշվապահական անհամապատասխանություն, որը կարող է առաջանալ ՖՀՄՄ 9-ի վաղ՝ մինչև նոր ապահովագրության պայմանագրերի ստանդարտի թողարկումը, կիրառելու արդյունքում: Հետաձգման մոտեցումը ՖՀՄՄ 9-ից ժամանակավոր՝ մինչև 2021 թ. հունվարի 1-ը, ազատման հնարավորություն է ընձեռում այն ընկերություններին, որոնց գործունեությունը հիմնականում կապված է ապահովագրության հետ: Ընկերությունն ակնկալում է հետաձգել ՖՀՄՄ 9-ի կիրառումը մինչև 2021 թվականի հունվարի 1-ը:

ՖՀՄՄ 9, Ֆինանսական գործիքներ (2014)

2014թ. հուլիսին Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհուրդը (ՀՀՄՄԽ) թողարկել է ՖՀՄՄ 9-ի («Ֆինանսական գործիքներ») վերջնական տարբերակը: ՖՀՄՄ 9-ը ուժի մեջ է մտնում 2018թ. հունվարի 1-ին կամ այդ ամսաթվից հետո սկսվող տարեկան հաշվետու ժամանակաշրջանների համար՝ նախապես կիրառելու թույլտվությամբ: Այն փոխարինում է ՀՀՄՄ 39-ին («Ֆինանսական գործիքներ՝ ճանաչումը և չափումը»)

2017թ. հոկտեմբերին ՀՀՄՄԽ-ն թողարկել է Բացասական փոխհատուցմամբ կանխավճարի առանձնահատկությունները (ՖՀՄՄ 9 փոփոխություններ): Փոփոխությունները ուժի մեջ են մտնում 2019թ. հունվարի 1-ից հետո սկսվող տարեկան հաշվետու ժամանակաշրջանների համար՝ նախապես կիրառելու թույլտվությամբ:

Ընկերությունը կկիրառի ստանդարտը 2021թ. հունվարի 1-ից՝ համաձայն վերը նշված ՖՀՄՄ 4-ի՝ «Ապահովագրության պայմանագրեր» փոփոխության:

ՖՀՄՄ 17, Ապահովագրության պայմանագրեր

ՖՀՄՄ 17-ը («Ապահովագրության պայմանագրեր») լույս է տեսել 2017թ. մայիսի 18-ին և ուժի մեջ է մտնում 2021թ. հունվարի 1-ին (հետադարձ կիրառում): ՖՀՄՄ 17-ը տրամադրում է համապարփակ ուղեցույց ապահովագրության և ներդրումային պայմանագրերի հաշվառման վերաբերյալ՝ հայեցողական մասնակցության հատկանիշներով: Ոչ-կյանքի ապահովագրության պայմանագրերի համար ՖՀՄՄ 17-ը ներկայացնում է կորուստների պահուստների պարտադիր զեղչում, ինչպես նաև ռիսկի ճշգրտում ոչ ֆինանսական ռիսկի համար, որը պահանջում է հավաստիության մակարդակի համարժեքի բացահայտում: Բացի այդ, ՖՀՄՄ 17-ը կփոխի ապահովագրության պայմանագրի հասույթի ներկայացումը, քանի որ համախառն ապահովագրավճարները այլևս չեն ներկայացվի շահույթ կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվությունում: Երկարաժամկետ կյանքի ապահովագրության պայմանագրերի գծով, ակնկալվում է, որ ՖՀՄՄ 17-ը զգալի ազդեցություն կունենա ակտուարական մոդելավորման վրա, քանի որ կպահանջվեն դրամական հոսքերի մանրամասն կանխատեսումներ և բոլոր ենթադրությունների պարբերական թարմացումներ՝ հանգեցնելով կա՛մ շահույթ և վնասի փոփոխականության կա՛մ ազդելով «պայմանագրային ծառայության մարժայիտ վրա, որն իրենից ներկայացնում է ապահովագրական պարտավորության առանձին բաղադրիչ՝ գործող պայմանագրերից չվաստակված շահույթը: Բացի այդ, ՖՀՄՄ 17-ը ներկայացնում է ապահովագրության պայմանագրերի գծով

պարտավորությունների տարբեր չափման մոտեցումներ՝ արտացոլելով ներդրումային կամ ապահովագրական ընկերության գործունեության արդյունքներում ապահովադրի մասնակցության տարբեր աստիճան (մասնակից չհանդիսացող, անուղղակի մասնակցություն, ուղղակի մասնակցություն):

Ընկերությունը ներկայում գնահատում է ինչպես ՖՀՄՍ 17-ի, այնպես էլ ՖՀՄՍ 9-ի կիրառման ազդեցությունը: Այս ֆինանսական հաշվետվությունների հրապարակման ամսաթվի դրությամբ նպատակահարմար չէ գնահատել Ընկերության ֆինանսական հաշվետվությունների վրա հնարավոր ազդեցությունը, քանի դեռ ստանդարտները չեն ընդունվել:

ՖՀՄՍ 15, Հաճախորդների հետ պայմանագրերից հասույթ

ՖՀՄՍ 15-ը ներկայացնում է հասույթի ճանաչման նոր պահանջներ՝ փոխարինելով ՀՀՄՍ 18 «Հասույթ», ՀՀՄՍ 11 «Կառուցման պայմանագրեր», և որոշ հասույթի հետ կապված մեկնաբանություններ: Նոր ստանդարտը սահմանում է հսկողության վրա հիմնված հասույթի ճանաչման մոդել և տրամադրում է հավելյալ ուղղորդում մանրամասնորեն չլուսաբանված տարբեր բնագավառներում գործող ՖՀՄՍ-ների ներքո, այդ թվում, թե պայմանավորվածությունների համար ինչպես հաշվառել բազմաթիվ կատարողական պարտավորությունները, փոփոխական գնագոյացումը, հաճախորդների փոխհատուցման իրավունքները, մատակարարների հետգնման տարբերակները և այլ ընդհանուր բարդություններ:

ՖՀՄՍ 15-ը ուժի մեջ է մտնում 2018թ. հունվարի 1-ին կամ այդ ամսաթվից հետո սկսվող տարեկան հաշվետու ժամանակաշրջաններում: Ընկերության ղեկավարությունը դեռ չի գնահատել ՖՀՄՍ 15-ի ազդեցությունը այս ֆինանսական հաշվետվությունների վրա:

ՖՀՄՍ 16, Վարձակալություն

ՖՀՄՍ 16-ը ներկայացնում է վարձակալության հաշվառման նոր պահանջներ և փոփոխություններ: ՖՀՄՍ 16-ը սահմանում է, որ վարձակալները պետք է հաշվառեն վարձակալությունները «հաշվապահական հաշվեկշռում»՝ ճանաչելով «օգտագործման իրավունքը» որպես ակտիվ և վարձակալության գծով համապատասխան պարտավորությունը:

Մինչույն ժամանակ ՖՀՄՍ 16-ը՝

- փոփոխում է վարձակալության սահմանումը,
- սահմանում է ակտիվի և պարտավորության հաշվառման պահանջներ, այդ թվում՝ այնպիսի առանձնահատկություններ, ինչպիսիք են ոչ-վարձակալական տարրերը, փոփոխվող վարձակալական վճարները և արտոնյալ (օպցիոն) ժամանակաշրջանները;
- ազատման հնարավորություն է տալիս կարճաժամկետ վարձակալությունների և ցածրարժեք ակտիվների համար,
- փոխում է «վաճառք հետադարձ վարձակալությամբ» պայմանավորվածությունների հաշվառումը,
- մեծապես պահպանում է ՀՀՄՍ 17-ի մոտեցումը՝ վարձատուների հաշվառման մասով;
- ներկայացնում է բացահայտման նոր պահանջներ:

ՖՀՄՍ 16-ը ուժի մեջ է մտնում 2019թ. հունվարի 1-ին և դրանից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար: Թույլատրվում է ստանդարտի վաղաժամկետ կիրառումը՝ պայմանով, որ ՖՀՄՍ 15-ը «Հաճախորդների հետ պայմանագրերից հասույթ», նույնպես կիրառվի: Ընկերության ղեկավարությունը դեռևս չի գնահատել ՖՀՄՍ 16-ի ազդեցությունը սույն ֆինանսական հաշվետվությունների վրա:

Այլ ստանդարտներ

Հետևյալ փոփոխված ստանդարտները և մեկնաբանությունները զգալի ազդեցություն չեն ունենա Բանկի ֆինանսական հաշվետվությունների վրա:

- 2014-2016թթ. ՖՀՄՄ-ների տարեկան բարեփոխումներ-ՖՀՄՄ 1 և ՀՀՄՄ 28 փոփոխություններ (ուժի մեջ է մտնում 2018թ. հունվարի 1-ին)
- ՖՀՄՄԿ 22 «Արտարժույթով գործարքներ և կանխավճարներ» (ուժի մեջ է մտնում 2018թ. հունվարի 1-ին)
- ՖՀՄՄԿ 23 «Անորոշություն շահութահարկի մոտեցումների շուրջ» (ուժի մեջ է մտնում 2019թ. հունվարի 1-ին)

4 Հաշվապահական հաշվառման քաղաքականություն

Ներկայացվող հաշվապահական քաղաքականությունը կիրառվել է ֆինանսական հաշվետվությունների պատրաստման ընթացքում: Հաշվապահական հաշվառման քաղաքականությունը կիրառվել է հետևողականորեն:

4.1 Ապահովագրության պայմանագրեր

Ապահովագրության պայմանագիր է համարվում այն պայմանագիրը, համաձայն որի կողմերից մեկը (ապահովագրողը) պայմանագրի մյուս կողմից (ապահովադիրից) իր վրա է վերցնում նշանակալի ապահովագրական ռիսկ՝ համաձայնվելով հատուցել ապահովադիրին, եթե սահմանված անորոշ ապագա դեպքը (ապահովագրական պատահար) բացասաբար ազդի ապահովադրի վրա: Ապահովագրական ռիսկը նշանակալի է այն և միայն այն դեպքում, եթե ապահովագրական պատահարը ցանկացած սցենարի (ընթացքի) դեպքում կարող էր ապահովագրողի կողմից նշանակալի լրացուցիչ հատուցումների վճարման պատճառ դառնալ, բացառությամբ այն սցենարների, որոնք չունեն կոմերցիոն բովանդակություն (այսինքն՝ գործարքի տնտեսական կողմի վրա նշմարելի ազդեցություն չունեն): Վերը նշված լրացուցիչ հատուցումները վերաբերում են այն գումարներին, որոնք գերազանցում են ապահովագրական պատահարի տեղի չունենալու դեպքում վճարվելիք գումարները:

Ապահովագրության պայմանագրերը կարող են նաև փոխանցել ֆինանսական ռիսկ: Ֆինանսական ռիսկը ստորև նշվածներից մեկի կամ մի քանիսի հնարավոր ապագա փոփոխության ռիսկն է՝ սահմանված տոկոսադրույք, ֆինանսական գործիքի գին, ապրանքի գին, արտարժույթի փոխարժեք, գների կամ դրույքների ինդեքս, վարկունակություն կամ վարկային ինդեքս կամ այլ փոփոխական՝ պայմանով, որ ոչ ֆինանսական փոփոխականի դեպքում այդ փոփոխականը հատուկ չէ պայմանագրի կողմերից մեկին:

Պայմանագիրը, որը բավարարում է ապահովագրության պայմանագրի սահմանմանը, մնում է որպես ապահովագրության պայմանագիր մինչ իր ժամկետի վերջը, նույնիսկ եթե ապահովագրության ռիսկը զգալիորեն կրճատվում է այդ ժամանակաշրջանի համար, մինչև բոլոր իրավունքները և պարտականությունները մարվում են, կամ դրանց գործողության ժամկետը լրանում է:

4.2 Ճանաչում և չափում

Համախառն ապահովագրավճարներ

Համախառն ապահովագրավճարներն ընդգրկում են պայմանագրով նախատեսված ամբողջ ժամանակաշրջանի համար ընդհանուր ստացվելիք ապահովագրավճարները և ճանաչվում են պոլիսի ուժի մեջ մտնելու օրվանից:

Համախառն ապահովագրավճարները ընդգրկում են միջնորդներին վճարվելիք միջնորդավճարները, և չեն ներառում ապահովագրավճարների գծով հարկերը և մայլ պարտադիր վճարները:

Չվաստակաժ ապահովագրավճարների պահուստ

Չվաստակաժ ապահովագրավճարները տարվա ընթացքում գրանցված ապահովագրավճարների այն մասն են, որոնք վերաբերում են հաշվեկշռի ամսաթվից հետո ռիսկային ժամանակաշրջաններին: Հետագա ժամանակաշրջաններին վերագրվող համամասնությունը հետաձգվում է, որպես չվաստակաժ ապահովագրավճարների պահուստ:

Վերաապահովագրողներին փոխանցված ապահովագրավճարներ

Վերաապահովագրողներին փոխանցված ապահովագրավճարները ընդգրկում են պայմանագրով նախատեսված ծածկույթի ամբողջ ժամանակաշրջանի համար ընդհանուր վճարվելիք ապահովագրավճարները և ճանաչվում են պոլիսի ուժի մեջ մտնելու օրվանից:

Չվաստակաժ վերաապահովագրավճարները տարվա ընթացքում գրանցված վերաապահովագրավճարների այն մասն են, որոնք վերաբերվում են հաշվեկշռի ամսաթվից հետո ռիսկային ժամանակաշրջաններին: Հետագա ժամանակաշրջաններին վերագրվող համամասնությունը հետաձգվում է՝ որպես չվաստակաժ ապահովագրավճարների համախառն պահուստում վերաապահովագրողների մասի փոփոխություն:

Համախառն հատուցումներ

Համախառն հատուցումները բաղկացած են ապահովագրողներին վճարված հատուցումներից, ապահովագրության պայմանագրերից բխող պարտավորությունների գնահատականների փոփոխություններից, կարգավորման ներքին և արտաքին ծախսերից: Հատուցումները ճանաչվում են դրանց ներկայացման պահին:

Համախառն հատուցումներում վերաապահովագրողների մասը

Հատուցումներում վերաապահովագրողների մասը ճանաչվում են այն ժամանակ, երբ դրանց գծով համախառն ապահովագրական հատուցումը ճանաչվում է համապատասխան պայմանագրի պայմանների համաձայն:

Վերաապահովագրության միջնորդավճարներից եկամուտ

Ստացված կամ ստացվելիք վերաապահովագրության միջնորդավճարները, որոնք չեն պահանջում Ընկերությունից հավելյալ ծառայությունների մատուցում, Ընկերության կողմից ճանաչվում են որպես եկամուտ համապատասխան պոլիսների ուժի մեջ մտնելու կամ վերակնքման պահին: Այնուամենայնիվ, եթե հավանական է, որ Ընկերությունից կպահանջվի հետագա ծառայությունների մատուցում, ապա միջնորդավճարը, կամ դրա մի մասը, հետաձգվում է և ճանաչվում որպես եկամուտ այն ժամանակաշրջանի համար, որի ընթացքում մատուցվում են ծառայությունները:

Ձեռքբերման ծախսեր

Ընդհանուր ապահովագրության պայմանագրերի ձեռքբերման ծախսերը ճանաչվում են այն ժամանակաշրջանի համար, երբ դրանք տեղի են ունեցել: Ձեռքբերման ծախսերն ընդգրկում են ուղղակի ծախսեր, ինչպիսիք են օրինակ միջնորդավճարները և բժշկական վճարները: Ձեռքբերման ծախսերի մի մասը հետաձգվում է հետագա հաշվապահական ժամանակաշրջանների համար այդ հետագա ժամանակաշրջաններ հետաձգված ապահովագրավճարներին համապատասխանելու համար: Ձեռքբերման ծախսերի հետաձգումը հաշվարկվում է միջնորդավճարի մեծությունը բաշխելով յուրաքանչյուր պայմանագրի ժամկետի վրա:

Ապահովագրական պարտավորություններ

Ապահովագրության պայմանագրերի գծով պարտավորությունները ճանաչվում են այն ժամանակ, երբ պայմանագրերը ուժի մեջ են մտնում: Այս պարտավորությունները հայտնի են որպես չկարգավորված պահանջների պահուստ, որը հիմնված է հաշվետու ամսաթվի դրությամբ տեղի ունեցած, բայց դեռևս չվճարված պահանջների գծով գնահատված վերջնական ծախսումների վրա, անկախ նրանից ներկայացված են, թե՛ ոչ, ինչպես նաև համապատասխան պահանջների գծով կարգավորման ծախսերի վրա, հանած ակնկալվող սուբրոգացիոն և այլ վերականգնումները: Որոշ պահանջների ծանուցման կամ կարգավորման առումով կարող են լինեն հետաձգումներ, հետևաբար այս պահանջների վերջնական արժեքը չի կարող հստակորեն որոշվել հաշվետու ամսաթվի դրությամբ: Պարտավորությունը հաշվարկվում է հաշվետու ամսաթվի դրությամբ՝ օգտագործելով ստանդարտ ակտուարական պահանջների կանխատեսման մեթոդները, որոնք հիմնվում են էմպիրիկ տվյալների և ընթացիկ ենթադրությունների վրա, որոնք կարող են ներառել բացասական շեղման մարժա: Պարտավորությունը չի զեղչվում փողի ժամանակային արժեքով: Հավասարակշռման և աղետների պահուստ չի ճանաչվում: Պարտավորություններն ապաճանաչվում են, երբ պայմանագրային պարտավորությունները կատարվում են կամ երբ այն դադարում է:

Չվաստակած ապահովագրավճարների պահուստը իրենից ներկայացնում է ապահովագրավճարների այն մասը, որը ակնկալվում է ստացվել հետագա ժամանակաշրջանների ընթացքում:

Սովորաբար պահուստը նվազեցվում է պայմանագրի ժամկետի ընթացքում և ճանաչվում է որպես ապահովագրավճարներից եկամուտ:

Ընկերությունը յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի ավարտին գնահատում է, թե արդյոք իր կողմից ճանաչված ապահովագրության պարտավորությունները համարժեք են՝ օգտագործելով իր ապահովագրության պայմանագրերի ներքո ապագա դրամական միջոցների հոսքերի ընթացիկ գնահատումները: Եթե այդ գնահատումը ցույց է տալիս, որ իր ապահովագրական պարտավորությունների հաշվեկշռային արժեքը (հանած դրանց հետ կապված՝ ձեռքբերման հետաձգված ծախսումները) համարժեք չեն գնահատված՝ ապագա դրամական միջոցների հոսքերի հետ համեմատած, ապա ամբողջ պակասուրդը պետք է ճանաչվի շահույթում կամ վնասում:

Վերաապահովագրություն

Ընկերությունը փոխանցում է ապահովագրական ռիսկը իր սովորական գործունեության ընթացքում: Վերաապահովագրության գծով ակտիվները ներկայացնում են վերաապահովագրող ընկերություններից ստացվելիք գումարները:

Վերաապահովագրության գծով ակտիվները վերանայվում են արժեզրկման համար յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ կամ ավելի հաճախ, երբ հաշվետու տարվա ընթացքում առաջանում է արժեզրկման հայտանիշ: Արժեզրկումն առաջանում է այն ժամանակ, երբ կա օբյեկտիվ վկայություն, որ վերաապահովագրական ակտիվի ճանաչումից հետո Ընկերությունը կարող է չստանալ բոլոր ստացվելիք գումարները, որոնք պետք է վճարվեն համապատասխան պայմանագրի պայմանների համաձայն և այդ իրադարձությունն ունի արժանահավատորեն չափելի ազդեցություն այն գումարների վրա, որոնք Ընկերությունը ստանալու է վերաապահովագրողից: Արժեզրկման կորուստը ճանաչվում է համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում:

Վերաապահովագրության գծով պարտավորություններ են հանդիսանում վերաապահովագրող ընկերություններին վճարվելիք գումարները: Վճարվելիք գումարները գնահատվում են համապատասխան վերաապահովագրության պայմանագրերի համաձայն:

Վերաապահովագրության գծով ակտիվները և պարտավորությունները ապաճանաչվում են, երբ պայմանագրային իրավունքները կատարվում են, կամ, երբ պայմանագիրը փոխանցվում է այլ կողմի:

Ապահովագրության գծով դեբիտորական և կրեդիտորական պարտքեր

Ապահովագրության գծով դեբիտորական և կրեդիտորական պարտքերի հաշվառումը նույնն է, ինչ ֆինանսական գործիքներինը, ինչպես նկարագրված է 4.8, 4.9 և 4.10 ծանոթագրություններում:

4.3 Եկամուտների և ծախսերի ճանաչում

Ապահովագրության պայմանագրերին չվերաբերող եկամուտների և ծախսերի ճանաչման չափանիշները ներկայացված են ստորև:

Ներդրումային եկամուտ

Ներդրումային եկամուտը բաղկացած է տոկոսային եկամտից, պարտքային արժեթղթերի և այլ վարկերի և դեբիտորական պարտքերի ամորտիզացված արժեքի փոփոխություններից:

Տոկոսային եկամուտը ճանաչվում է համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում հաշվեգրմանը զուգահեռ և հաշվարկվում է՝ օգտագործելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը:

Ներդրումներից զուտ օգուտ կամ վնաս

Ներդրումներից զուտ օգուտը կամ վնասը, որը հաշվառվում է համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում, ներառում է ֆինանսական ակտիվներից և ներդրումային գույքից օգուտը կամ վնասը: Ներդրումների վաճառքից օգուտը կամ վնասը հաշվառվում է որպես զուտ վաճառքի և սկզբնական կամ ամորտիզացված արժեքի տարբերություն և ճանաչվում է վաճառքի գործառնության պահին:

Զուտ առևտրային եկամուտ

Զուտ առևտրային եկամուտը ներառում է առևտրային նպատակներով պահվող ֆինանսական ակտիվների և պարտավորությունների իրական արժեքի փոփոխությունից իրացված և չիրացված եկամուտը և ծախսը, տոկոսներից, շահաբաժիններից և արտարժույթային տարբերություններից գոյացող բոլոր եկամուտները և ծախսերը: Զուտ առևտրային եկամուտը ներառում է նաև արտարժույթի առք ու վաճառքից զուտ եկամուտը կամ ծախսը:

Ֆինանսական ծախս

Վճարված տոկոսագումարը ճանաչվում է համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում հաշվեգրմանը զուգահեռ և հաշվարկվում է օգտագործելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը: Հաշվեգրված տոկոսագումարը ներառվում է տոկոսային ֆինանսական պարտավորության հաշվեկշռային արժեքում:

4.4 Արտարժույթ

Արտարժույթով կատարված գործարքները վերահաշվարկվում են գործառնական արժույթով՝ գործարքի օրվա փոխարժեքով: Արտարժույթով արտահայտված առևտրային նպատակներով պահվող ակտիվների և պարտավորությունների վերահաշվարկումից առաջացած օգուտը և վնասը ճանաչվում են շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվության զուտ առևտրային եկամուտ հոդվածում, մինչդեռ ոչ առևտրային ակտիվների վերահաշվարկումից գոյացող օգուտը և վնասը ճանաչվում են ֆինանսական արդյունքների մասին հաշվետվության այլ եկամուտ կամ այլ ծախս հոդվածում: Արտարժույթով

արտահայտված դրամային ակտիվները և պարտավորությունները վերահաշվարկվում են գործառնական արժույթով կիրառելով հաշվապահական հաշվեկշռի ամսաթվի դրությամբ գործող փոխարժեքը:

Արտարժույթով արտահայտված վաճառքի համար մատչելի դրամային արժեթղթերի իրական արժեքում փոփոխությունները վերլուծվում են փոխարժեքային տարբերությունների միջև, որոնք առաջանում են արժեթղթերի ամորտիզացված գումարների փոփոխության և արժեթղթերի հաշվեկշռային արժեքի այլ փոփոխությունների արդյունքում: Ամորտիզացված գումարում փոփոխությունների հետ կապված փոխարժեքային տարբերությունները ճանաչվում են շահույթում կամ վնասում, իսկ հաշվեկշռային արժեքում այլ փոփոխությունները ճանաչվում են այլ համապարփակ եկամուտում:

Պատմական արժեքով հաշվառվող ոչ դրամային արտարժույթային հողվածները վերահաշվարկվում են գործարքի օրվա փոխարժեքով: Իրական արժեքով հաշվառվող ոչ դրամային արտարժույթային հողվածները վերահաշվարկվում են իրական արժեքի որոշման օրվա փոխարժեքով: Ոչ դրամային հողվածների, ինչպիսին են ֆինանսական արդյունքներով ճշգրտվող՝ իրական արժեքով պահվող բաժնետոմսերը, փոխարժեքային տարբերությունները, ներկայացվում են որպես իրական արժեքի փոփոխությունից շահույթի կամ վնասի մաս: Ոչ դրամային հողվածների փոխարժեքային տարբերությունները, ինչպես օրինակ՝ վաճառքի համար մատչելի դասակարգված բաժնետոմսերը, ընդգրկվում են կապիտալի վաճառքի համար մատչելի ներդրումների գծով վերագնահատման պահուստում:

Յուրաքանչյուր գործառնության պայմանագրով նախատեսված փոխարժեքի և տվյալ գործառնության օրվա գործող փոխարժեքի տարբերությունից առաջացող օգուտը կամ վնասը հաշվառվում է համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվության զուտ առևտրային եկամուտ հողվածի արտարժույթի առք ու վաճառքից զուտ եկամուտ տողում:

Ընկերության կողմից ֆինանսական հաշվետվությունների պատրաստման նպատակով օգտագործվել են հետևյալ փոխարժեքները.

	2017թ. դեկտեմբերի 31	2016թ. դեկտեմբերի 31
<< դրամ/1 ԱՄՆ դոլար	484.10	483.94
<< դրամ/1 Եվրո	580.10	512.20

4.5 Հարկում

Շահույթի գծով հաշվետու տարվա շահութահարկը բաղկացած է ընթացիկ և հետաձգված հարկերից: Շահութահարկը ճանաչվում է շահույթում կամ վնասում, և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում, բացառությամբ այն հարկերի, որոնց գծով գործառնությունների արդյունքները ճանաչվել են այլ համապարփակ եկամտում, ինչի դեպքում հարկերը նույնպես ճանաչվում են այլ համապարփակ եկամտում:

Ընթացիկ հարկը տարվա համար հարկվող եկամուտից վճարվելիք հարկն է՝ հաշվապահական հաշվեկշռի ամսաթվին գործող հարկային դրույքներով, ինչպես նաև նախորդ տարիների համար վճարված հարկերի ճշգրտումները: Այն դեպքում, երբ ֆինանսական հաշվետվություններն արտոնված են ներկայացման համար մինչև համապատասխան հարկային վճարումները, ապա հարկվող շահույթը կամ կորուստը հիմնվում են մոտավոր թվերի վրա: Հարկային մարմինները կարող են ունենալ ավելի խիստ դիրք հարկային օրենսդրությունն արտաձելու և հարկային հաշվարկները վերանայելու համար: Որպես արդյունք, հարկային մարմինները կարող են պահանջել լրացուցիչ հարկերի մուծում այն գործարքների գծով, որոնց համար նախկինում պահանջ չի ներկայացվել: Հետևաբար, կարող են առաջանալ նշանակալի լրացուցիչ հարկեր, տույժեր և տուգանքներ: Հարկային ստուգումը կարող է ներառել ստուգման

տարվան անմիջապես հաջորդող 3 օրացուցային տարիներ: Որոշ հանգամանքներում հարկային ստուգումը կարող է ներառել ավելի երկար ժամանակաշրջաններ:

Հետաձգված հարկային ակտիվները և պարտավորությունները հաշվարկվում են հաշվապահական հաշվեկշռի պարտավորությունների մեթոդի համաձայն, որը հաշվի է առնում բոլոր ժամանակային տարբերությունները, որոնք առաջանում են ֆինանսական հաշվետվություններում ճանաչված ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային գումարների և հարկային նպատակներով հաշվարկվող գումարների միջև, բացառությամբ այն դեպքերի, երբ այդ տարբերություններն առաջացել են գույքի չափանիշների ճանաչման ժամանակ կամ կազմակերպությունների միավորում չհանդիսացող գործառնություններից առաջացող ակտիվների կամ պարտավորությունների դեպքում և ինչը առաջացման պահին չի ազդում ոչ հաշվապահական, և ոչ էլ հարկման նպատակով հաշվարկվող շահույթի վրա:

Հետաձգված հարկային ակտիվ ճանաչվում է միայն այն չափով, որքանով հավանական է, որ ապագայում առկա կլինի հարկման ենթակա շահույթ, որի հաշվին կարող են օգտագործվել ժամանակավոր տարբերությունները: Հետաձգված հարկային ակտիվները և պարտավորությունները հաշվարկվում են այն հարկային դրույքով, որը ենթադրվում է, որ կգործի ակտիվների իրացման և պարտավորությունների մարման ժամանակ՝ հիմնվելով տվյալ ժամանակաշրջանի կամ հաշվետու ժամանակաշրջանի փաստացի գործող դրույքների վրա:

Հետաձգված հարկային ակտիվներ և պարտավորություններ առաջանում են նաև այն ժամանակավոր տարբերությունների գծով, որոնք առաջանում են դուստր, ասոցիացված կամ համատեղ կազմակերպություններում ներդրումներից, բացի այն դեպքերից, երբ ժամանակավոր տարբերությունների իրացման ժամկետները կառավարվում են մայր կազմակերպության կողմից, և հավանական է, որ դրանք մոտ ապագայում չեն իրացվի:

ՀՀ-ում Ընկերություններն իրենց գործունեության ընթացքում վճարում են նաև այլ հարկեր: Այդ հարկերը ներառված են շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվության այլ ծախսերում:

4.6 Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ

Դրամական միջոցները և դրանց համարժեքները ընդգրկում են կանխիկ դրամը և ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ պահանջները, այդ թվում, բարձր իրացվելի ներդրումները, որոնց մարման ժամկետը ձեռք բերման օրից 90 օր է, որոնք կարող են փոխարկվել կանխիկ կարճ ժամանակամիջոցում հեշտությամբ և չեն ենթարկվում արժեքի փոփոխման զգալի ռիսկի:

Դրամական միջոցները և դրանց համարժեքները հաշվառվում են ամորտիզացված արժեքով:

4.7 Պահանջներ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ

Իր բնականոն գործունեության ընթացքում Ընկերությունն օգտագործում է բանկերում բացված ընթացիկ և ավանդային հաշիվներ: Ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ պահանջների գումարները նվազեցվում են արժեզրկումից պահուստների գումարներով:

4.8 Ֆինանսական գործիքներ

Ընկերությունը ֆինանսական ակտիվները և պարտավորություններն իր հաշվեկշռում ճանաչում է միայն և միայն այն դեպքում, երբ նա դառնում է գործիքի պայմանագրային կողմ: Ֆինանսական ակտիվների և պարտավորությունների սովորական բնույթ կրող առք ու վաճառքների դեպքում դրանք ձևակերպվում են գործարքի օրվա ամսաթվով: Սովորական բնույթ կրող ձեռք բերումների դեպքում, երբ ֆինանսական գործիքը հետագայում պետք է չափվի իրական արժեքով, պայմանագրի օրվա և գործարքի օրվա միջև ընկած ժամանակամիջոցում այն հաշվառվում է նույն սկզբունքով, ինչ որ ձեռք բերված գործիքների դեպքում:

Ֆինանսական ակտիվները և պարտավորությունները սկզբնական ճանաչման ժամանակ չափվում են սկզբնական արժեքով, գումարած գործարքի հետ կապված ցանկացած ծախսումները, բացի ֆինանսական արդյունքներով ճշգրտվող՝ իրական արժեքով հաշվառվող ֆինանսական գործիքների:

Սկզբնական ճանաչումից հետո բոլոր ֆինանսական պարտավորությունները, բացի ֆինանսական արդյունքներով ճշգրտվող՝ իրական արժեքով հաշվառվող ֆինանսական գործիքների (ներառված նաև առևտրային նպատակներով պահվող գործիքները), հաշվառվում են ամորտիզացված արժեքով՝ օգտագործելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը: Սկզբնական ճանաչումից հետո ֆինանսական արդյունքներով ճշգրտվող՝ իրական արժեքով հաշվառվող ֆինանսական գործիքները հաշվառվում են իրական արժեքով:

Ընկերության կողմից ֆինանսական ակտիվները դասակարգվում են՝ ըստ հետևյալ կատեգորիաների.

- վարկեր և դեբիտորական պարտքեր,
- վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ:

Ներդրումների նման դասակարգումը կատարվում է դրանց ձեռքբերման պահին՝ Ընկերության ղեկավարության կողմից սահմանված գնահատումների հիման վրա հաշվի առնելով ձեռքբերման նպատակները: Ակտիվների հետագա վերադասակարգումը կատարվում է անհրաժեշտության և հնարավորության դեպքում՝ յուրաքանչյուր ֆինանսական տարվա ավարտից հետո:

Վարկեր և դեբիտորական պարտքեր

Վարկերը և դեբիտորական պարտքերը ֆիքսված կամ որոշելի վճարումներով ֆինանսական ակտիվներն են, որոնք ստեղծվում են Ընկերության կողմից ուղղակիորեն պարտապանին դրամ տրամադրելու միջոցով՝ առանց պարտքը վաճառելու մտադրության:

Ֆիքսված ժամկետներով տրամադրված վարկերը սկզբնապես ճանաչվում են իրական արժեքով՝ գումարած գործարքից ծախսումները: Երբ տրամադրված գումարների իրական արժեքը տարբերվում է վարկի իրական արժեքից, օրինակ երբ վարկը տրամադրվում է շուկայականից ցածր տոկոսադրույքով, տրամադրված գումարի և վարկի իրական արժեքների տարբերությունը վարկի սկզբնական ճանաչման ժամանակ ձևակերպվում է որպես ծախս շուկայականից ցածր դրույքներով ակտիվների տեղաբաշխումից՝ շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում: Այնուհետև վարկերն ու փոխատվությունները չափվում են ամորտիզացված արժեքով՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը: Ֆիքսված մարման ժամկետ չունեցող վարկերն ու փոխատվությունները հաշվառվում են ամորտիզացված արժեքով՝ ելնելով մարման ենթադրվող ժամկետներից: Վարկերի ու փոխատվությունների գումարները նվազեցվում են դրանց գծով արժեզրկումից պահուստների գումարներով:

Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ

Վաճառքի համար մատչելի ակտիվները պարտքային, ինչպես նաև կապիտալի գործիքներում կատարված այն ներդրումներն են, որոնք Ընկերությունը մտադիր է պահել անորոշ ժամկետով, և որոնք կարող են վաճառվել իրացվելիության կարիքների բավարարման համար, ինչպես նաև տոկոսադրույքներում, փոխարժեքներում կամ բաժնետոմսերի գներում փոփոխությունների դեպքում: Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվները նախնական ճանաչումից հետո հաշվառվում են իրական արժեքով: Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների իրական արժեքի փոփոխություններից առաջացած օգուտն ու վնասը վերագրվում է սեփական կապիտալին մինչև ֆինանսական ակտիվի օտարումը կամ արժեզրկումը, որի դեպքում կապիտալում ճանաչված օգուտը կամ վնասը վերաձևակերպվում է ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում: Ամեն դեպքում, տոկոսները հաշվարկվում են արդյունավետ

տոկոսադրույքի մեթոդով՝ շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում: Վաճառքի համար մատչելի կապիտալի գործիքների գծով շահաբաժինները շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում գրանցվում են այն ժամանակ, երբ Ընկերությունը իրավունք է ձեռք բերում ստանալու այդ շահաբաժինները:

Ակտիվ ֆինանսական շուկաներում գործող ֆինանսական ակտիվի իրական արժեքը հաշվետու ամսաթվին բորսայի փակման պահին այդ ակտիվի գծով գնանշվող գինն է: Եթե գնանշված շուկայական գինը առկա չէ, ապա գործիքի իրական արժեքը որոշվում է գնային մոդելների կամ գեղջված դրամական հոսքերի տեխնիկայի միջոցով: Հակառակ դեպքում ներդրումները հաշվառվում են ինքնարժեքով՝ նվազեցնելով արժեզրկումից կորուստները:

4.9 Ֆինանսական ակտիվների արժեզրկում

Յուրաքանչյուր հաշվապահական հաշվեկշռի ամսաթվի դրությամբ Ընկերությունն իրականացնում է արժեզրկման գնահատում ֆինանսական ակտիվների կամ ֆինանսական ակտիվների խմբի համար:

Ամորտիզացված արժեքով հաշվառվող ակտիվներ

Ֆինանսական ակտիվը կամ ֆինանսական ակտիվների խումբը արժեզրկվում է և արժեզրկումից կորուստը ճանաչվում է միայն այն դեպքում, եթե կա օբյեկտիվ վկայություն արժեզրկման մասին՝ որպես ակտիվի նախնական ճանաչումից հետո կատարված մեկ կամ մի քանի իրադարձությունների («ծախսային իրադարձություն») արդյունք, և երբ այդ իրադարձությունը կամ իրադարձություններն ազդեցություն ունեն ֆինանսական ակտիվի կամ ակտիվների խմբի ակնկալվող ապագա դրամական հոսքերի վրա, որոնք կարելի է արժանահավատորեն չափել:

Ընկերությունը սկզբից գնահատում է արժեզրկման օբյեկտիվ պայմանների գոյությունը անհատական գնահատման արդյունքում այն ակտիվների համար, որոնք անհատապես էական են և հետո անհատական կամ խմբային գնահատումների արդյունքում այն ֆինանսական ակտիվների համար, որոնք անհատապես էական չեն: Անհատական գնահատման արդյունքում արժեզրկման օբյեկտիվ գոյությունը հաստատելուց կամ ժխտելուց հետո ակտիվները դասակարգվում են պարտքային ռիսկի նմանատիպ բնույթ ունեցող խմբերում՝ խմբային գնահատում իրականացնելու նպատակով: Այն ակտիվները, որոնց գծով անհատական գնահատման արդյունքում ձևավորվել են արժեզրկումից պահուստներ, չեն ներառվում վերոհիշյալ խմբերում:

Երբ առկա է վկայություն ամորտիզացված արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվի արժեզրկման վերաբերյալ, արժեզրկման պահուստի գումարը որոշվում է որպես ակտիվի հաշվեկշռային արժեքի և այդ ֆինանսական գործիքի սկզբնական արդյունավետ տոկոսադրույքով զեղջված դրամական միջոցների ակնկալվող ապագա հոսքերի (բացառությամբ վարկի հետ կապված ապագա ծախսերի) ներկա արժեքի միջև տարբերություն: Ակտիվի հաշվեկշռային արժեքը նվազեցվում է արժեզրկման պահուստի միջոցով, արժեզրկումից ծախսը արտացոլվում է համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում:

Եթե հետագա ժամանակաշրջանում, արժեզրկումից կորուստը նվազում է և այդ նվազեցումը կարող է օբյեկտիվորեն կապվել արժեզրկման ճանաչումից հետո առաջացող որևէ իրադարձության հետ, ապա նախկինում ճանաչված արժեզրկումից կորուստը հակադարձվում է: Արժեզրկումից կորստի որևէ հետագա հակադարձում ճանաչվում է շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում, այն դեպքում, երբ ակտիվի հաշվեկշռային արժեքը գերազանցում է հակադարձման ամսաթվով իր հակադարձված արժեքին:

Ֆինանսական ակտիվների արժեզրկման պահուստները ֆինանսական հաշվետվություններում ձևավորվել են գոյություն ունեցող տնտեսական պայմանների հիման վրա: Ընկերությունը չի կարող կանխատեսել՝ ինչպես Հայաստանում կարող են փոխվել տնտեսական պայմանները, և ինչ ազդեցություն կարող են ունենալ այդ փոփոխությունները ֆինանսական ակտիվների արժեզրկման պահուստների ճշտության վրա հետագա ժամանակաշրջաններում:

Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ

Երբ վաճառքի համար մատչելի ակտիվն արժեզրկվում է, ապա նրա արժեքի (նվազեցված մարումների և ամորտիզացիայի գումարներով) և ընթացիկ իրական արժեքի տարբերությունը, բացառությամբ նախկինում համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում ճանաչված արժեզրկումից գումարների, այլ համապարփակ եկամտից վերաձևակերպվում է համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում:

Վաճառքի համար մատչելի կապիտալի գործիք հանդիսացող ներդրումների գծով արժեզրկումից կորուստների հակադարձում համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում չի կատարվում: Վաճառքի համար մատչելի պարտքային գործիք հանդիսացող ներդրումների գծով արժեզրկումից կորուստների հակադարձումը ճանաչվում է համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում, եթե ակտիվի իրական արժեքի բարձրացումը օբյեկտիվորեն կարելի է համարել հետագա իրադարձությունների արդյունք, որոնք կատարվել են կորուստը համապարփակ ֆինանսական արդյունքներով ճանաչելուց հետո:

4.10 Ֆինանսական ակտիվների և պարտավորությունների ապաճանաչում

Ֆինանսական ակտիվներ

Ֆինանսական ակտիվը (կամ ֆինանսական ակտիվի մի մասը, կամ ֆինանսական ակտիվների խմբի մի մասը) ապաճանաչվում է, երբ.

- վերանում է ակտիվից դրամական հոսքեր ստանալու պահանջի իրավունքը,
- Ընկերությունը փոխանցում է ակտիվից դրամական հոսքեր ստանալու պահանջի իրավունքը, կամ պահպանում է այդ իրավունքը, բայց պարտավորվում է ստացված գումարներն ամողջությամբ և ժամանակին փոխանցել երրորդ կողմին՝ փոխանցման համաձայնագրի համաձայն,
- և Ընկերությունը կամ (ա) փոխանցում է ակտիվի գծով բոլոր ռիսկերի և օգուտների զգալի մասը, կամ (բ) չի փոխանցում, և չի պահպանում ակտիվի գծով բոլոր ռիսկերի և օգուտների զգալի մասը, այլ փոխանցում է ակտիվի նկատմամբ վերահսկողությունը:

Եթե Ընկերությունը փոխանցում է ակտիվից դրամական հոսքեր ստանալու պահանջի իրավունքը և չի փոխանցում, և չի պահպանում ակտիվի գծով բոլոր ռիսկերի և օգուտների զգալի մասը, և չի փոխանցում ակտիվի նկատմամբ վերահսկողությունը, ապա ակտիվը հաշվառվում է Ընկերության շարունակվող մասնակցության համապատասխան ֆինանսական ակտիվում: Երբ շարունակվող մասնակցությունը ձեռք է բերում փոխանցվող ակտիվի երաշխիքային ապահովման ձև, ապա այդպիսի մասնակցության չափը համարվում է հետևյալ երկու մեծություններից նվազագույնը՝ ակտիվի հաշվեկշռային արժեք կամ Ընկերության կողմից փոխհատուցվելիք առավելագույն գումար:

Երբ շարունակվող մասնակցությունը ձեռք է բերում փոխանցվող ակտիվի դուրսգրված վաճառքի և/կամ գնման օպցիոնի ձև (ներառյալ դրամային և նման պայմաններով օպցիոնները), մասնակցության չափը որոշվում է այն գումարի չափով, որով Ընկերությունը կարող է հետ գնել փոխանցվող ակտիվը, բացառությամբ իրական արժեքով գնահատված դուրսգրված վաճառքի օպցիոնի (ներառյալ դրամային և նման պայմաններով օպցիոնները), երբ շարունակվող

մասնակցության չափը համարվում է հետևյալ երկու մեծություններից նվազագույնը՝ փոխանցվող ակտիվի իրական արժեքը կամ օպցիոնի կատարման գինը:

Ֆինանսական պարտավորություններ

Ֆինանսական պարտավորությունն ապաճանաչվում է, երբ այն մարվում է, չեղյալ է համարվում կամ լրացել է դրա ուժի մեջ մնալու ժամկետը:

Փոխառուի և փոխատուի միջև պարտքային գործիքների փոխանակումը, որոնց պայմաններն էականորեն տարբերվում են միմյանցից, կամ կատարվում է գործող պարտքային գործիքի պայմանների էական փոփոխություն, իրենից ներկայացնում է հին պարտքի մարում, որը պետք է հանգեցնի այդ պարտքի ապաճանաչմանը և նոր պարտքային գործիքի ճանաչմանը, իսկ տարբերությունը համապատասխան հաշվեկշռային հաշվի հետ ձևակերպվում է շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում:

4.11 Ռեպո և հակադարձ ռեպո համաձայնագրեր

Հետգնման պայմանով արժեթղթերի վաճառքի գործառնությունները («ռեպո») դիտարկվում են որպես ապահովված ֆինանսական գործարքներ: Հետգնման պայմանով վաճառված արժեթղթերը շարունակվում են հաշվառվել հաշվեկշռում, և այն դեպքում, երբ գնորդն ունի նշված արժեթղթերի վաճառքի կամ գրավադրման պայմանագրային իրավունք կամ համաձայնություն, դրանք վերադասակարգվում են որպես «Հետգնման պայմանագրերով գրավադրված արժեթղթեր» և ներկայացվում են որպես առանձին հաշվեկշռային հոդված: Համապատասխան պարտավորությունն արտացոլվում է ֆինանսական կազմակերպությունների կամ հաճախորդների նկատմամբ հաշիվներում:

Հետվաճառքի պայմանով գնված արժեթղթերը («հակադարձ ռեպո») չեն ճանաչվում հաշվապահական հաշվեկշռում, իսկ տրամադրված գումարները հաշվառվում են որպես պահանջներ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ կամ հաճախորդներին տրված վարկեր և փոխատվություններ:

Արժեթղթերի գնման և վաճառքից առաջացած եկամուտը կամ ծախսը իրենից ներկայացնում է տոկոսային եկամուտ կամ ծախս, որոնք հաշվեգրվում են հետգնման պայմանագրերի գործողության ժամկետների ընթացքում՝ օգտագործելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը:

4.12 Հիմնական միջոցներ

Հիմնական միջոցները ներկայացված են իրական արժեքի և կուտակված մաշվածության տարբերությամբ, բացառությամբ Ընկերության փոխադրամիջոցների, որը ներկայացված է սկզբնական արժեքի և կուտակված մաշվածության տարբերությամբ: Երբ ակտիվի հաշվեկշռային արժեքը ավելի մեծ է նրա գնահատված փոխհատուցվող գումարից ոչ ժամանակավոր հանգամանքների պատճառով, այն անմիջապես նվազեցվում է մինչև այդ փոխհատուցվող գումարը: Մաշվածությունը հաշվարկվում է գծային մեթոդով ակտիվի օգտակար ծառայության ժամկետի ընթացքում, կիրառելով հետևյալ տարեկան դրույքաչափերը՝

	Օգտակար ծառայության ժամկետ (տարիներ)	Տոկոսադրույք (%)
Շենքեր	50	2
Համակարգիչներ և կապի միջոցներ	5	20
Տրանսպորտային միջոցներ	8	12.5
Գույք և գրասենյակային սարքավորումներ	8	12.5
Այլ հիմնական միջոցներ	8	12.5

Վարձակալված հիմնական միջոցների վրա ուղղված կապիտալ բնույթի ծախսումները կապիտալացվում և ամորտիզացվում են գծային հիմունքով վարձակալման ժամկետի և հիմնական միջոցների և դրանց օգտակար ծառայության ժամկետներից նվազագույնով: Անավարտ շինարարությանը պատկանող ակտիվները հաշվառվում են փաստացի ծախսերի և արժեզրկումից կորուստների տարբերությամբ: Շինարարական աշխատանքների ավարտից հետո ակտիվները փոխանցվում են հիմնական միջոցներին և հաշվառվում են իրենց մնացորդային արժեքով: Անավարտ շինարարությանը պատկանող ակտիվները չեն ամորտիզացվում քանի դեռ պատրաստ չեն օգտագործման համար:

Հիմնական միջոցների վերանորոգման և պահպանման հետ կապված ծախսումները շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում ճանաչվում են որպես ծախս՝ դրանց կատարման պահին: Կապիտալ բնույթի նորոգման ծախսումները ավելացվում են ակտիվի հաշվեկշռային արժեքին, երբ հավանական է, որ դրանց շնորհիվ ապագա տնտեսական օգուտները՝ ավելի շատ, քան ակնկալվում էր առկա ակտիվի նորմատիվային ցուցանիշների սկզբնական գնահատումից, կհոսեն դեպի Ընկերություն: Այս ծախսումների մաշվածությունը հաշվարկվում է համապատասխան ակտիվի օգտակար ծառայության մնացորդային ժամկետի ընթացքում:

Հիմնական միջոցի իրացումից առաջացած օգուտ կամ վնասը որոշվում է որպես ակտիվի իրացումից զուտ մուտքերի և հաշվեկշռային արժեքի տարբերություն և հաշվառվում է գործառնական շահույթում:

Վերագնահատման հաճախականությունը կախված է արժեզրկված ակտիվների իրական արժեքում փոփոխություններից: Այն դեպքում, երբ նշանակալի շեղում կա վերագնահատված ակտիվների իրական արժեքի և նրանց մնացորդային արժեքների միջև, ապա անցկացվում է հետագա վերագնահատում: Վերագնահատումը կատարվում է հիմնական միջոցների ողջ դասի համար:

Վերագնահատման արդյունքում ակտիվի արժեքի աճը արտացոլվում է կապիտալում՝ հիմնական միջոցների վերագնահատման պահուստում, բացի այն դեպքերից, երբ այն փոխհատուցում է ֆինանսական արդյունքներում տվյալ ակտիվի գծով նախկինում ճանաչված վերագնահատումից վնասը. այս դեպքում վերագնահատումից աճը նույնպես ճանաչվում է ֆինանսական արդյունքներում: Վերագնահատման արդյունքում ակտիվի արժեքի նվազումը ճանաչվում է ֆինանսական արդյունքներում, բացի այն դեպքերից, երբ այն փոխհատուցում է նախկինում տվյալ ակտիվի գծով կապիտալում ճանաչված վերագնահատումից աճը:

Վերագնահատված գումարով հաշվառվող հիմնական միջոցների իրացման դեպքում, իրացված հիմնական միջոցների համապատասխան դասի վերագնահատման պահուստում վերագրված գումարը փոխանցվում է չբաշխված շահույթին:

4.13 Ոչ նյութական ակտիվներ

Ոչ նյութական ակտիվները բաղկացած են համակարգչային ծրագրերից, լիցենզիաներից և վստահագրերից:

Առանձին ձեռք բերված ոչ նյութական ակտիվները սկզբնապես ճանաչվում են ինքնարժեքով: Նախնական ճանաչումից հետո ոչ նյութական ակտիվները հաշվառվում են ինքնարժեքով՝ նվազեցնելով կուտակված ամորտիզացիան և արժեզրկումից կորուստները: Ոչ նյութական ակտիվների օգտակար ծառայությունների ժամկետները կարող են լինել որոշակի կամ անորոշ: Որոշակի օգտակար ծառայությունների ժամկետներ ունեցող ոչ նյութական ակտիվներն ամորտիզացվում են գծային հիմունքով օգտակար ծառայության ընթացքում՝ 10 տարվա ընթացքում և գնահատվում են արժեզրկման առումով, երբ առկա են արժեզրկման հատկանիշներ: Ամորտիզացիայի հաշվառման մեթոդները և ժամկետները վերանայվում են յուրաքանչյուր ֆինանսական տարվա վերջում: Համակարգչային ծրագրերի ընթացիկ սպասարկման ծախսերը հաշվառվում են որպես ծախս դրանց կատարման ժամանակ:

4.14 Բռնագանձված ակտիվներ

Որոշ դեպքերում, ակտիվները բռնագանձվում են վարկային պարտավորությունների չկատարման արդյունքում: Բռնագանձված ակտիվները չափվում են սկզբնական արժեքից և իրացման զուտ արժեքից նվազագույնով:

4.15 Վարձակալություն

Գործառնական վարձակալություն – Ընկերությունը որպես վարձակալ

Ակտիվների վարձակալությունը, որի դեպքում ակտիվի սեփականության հետ կապված բոլոր ռիսկերն ու օգուտները պահպանվում են վարձատուի մոտ, դասակարգվում է որպես գործառնական վարձակալություն: Գործառնական վարձակալության շրջանակներում վարձավճարները ճանաչվում են որպես ծախս ֆինանսական արդյունքում գծային հիմունքով վարձակալության ժամկետի ընթացքում և ներառվում են գործառնական ծախսերում:

4.16 Ներգրված միջոցներ

Ներգրված միջոցները, որոնք ներառում են բանկերից ստացված վարկերը, սկզբնապես ճանաչվում են ստացված միջոցների իրական արժեքով՝ հանած գործառնությունների գծով ուղղակի ծախսերը: Սկզբնական ճանաչումից հետո ներգրված միջոցները հաշվառվում են ամորտիզացված արժեքով՝ օգտագործելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը: Եկամուտները և ծախսերը գրանցվում են շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում, ինչպես պարտավորությունների ապաճանաչման ժամանակ, այնպես էլ ամորտիզացիայի ընթացքում:

4.17 Պահուստներ

Պահուստը ճանաչվում է, երբ Ընկերությունն ունի ներկա իրավական կամ կառուցողական պարտականություն՝ որպես անցյալ դեպքերի արդյունք, և հավանական է, որ այդ պարտականությունը մարելու նպատակով կպահանջվի տնտեսական օգուտներ մարմնավորող միջոցների արտահոսք, և պարտականության գումարը հնարավոր է արժանահավատորեն գնահատել:

4.18 Սեփական կապիտալ

Բաժնետիրական կապիտալ

Սովորական բաժնետոմսերը դասակարգվում են որպես կապիտալ: Նոր բաժնետոմսերի թողարկմանը, բացի կազմակերպությունների միավորման դեպքում թողարկվող բաժնետոմսերի, վերաբերող ուղղակի ծախսերը նվազեցվում են կապիտալի աճից: Երբ թողարկման արդյունքում ստացված գումարների իրական արժեքը գերազանցում է բաժնետոմսերի անվանական արժեքը, տարբերությունը հաշվառվում է որպես հավելավճար:

Լրացուցիչ կապիտալ

Լրացուցիչ կապիտալը արտացոլում է կապակցված կողմից ստացված շուկայականից ցածր տոկոսադրույքով ստացված փոխառության իրական արժեքով վերահաշվարկված տարբերության արդյունքը:

Չբաշխված շահույթ

Չբաշխված շահույթը ներառում է ընթացիկ և նախորդ ժամանակաշրջանների չբաշխված շահույթը:

Շահաբաժիններ

Հաշվապահական հաշվեկշռի ամսաթվով շահաբաժինները դուրս են գրվում կապիտալից և ճանաչվում են որպես պարտավորություն, միայն երբ դրանք հաստատվում են հաշվապահական հաշվեկշռի ամսաթվով կամ մինչև այդ: Հաշվապահական հաշվեկշռի ամսաթվից հետո մինչև ֆինանսական հաշվետվությունների հրապարակման ամսաթիվը հայտարարված կամ հաստատված շահաբաժինները բացահայտվում են:

Հիմնական միջոցների վերագնահատման պահուստ

Հիմնական միջոցների վերագնահատման աճը օգտագործվում է գրանցելու համար հիմնական միջոցների իրական արժեքի աճը և նվազումը այն չափի, որ նման նվազումը վերաբերում է նույն ակտիվի աճին, որը նախկինում ճանաչվել էր սեփական կապիտալում:

Վաճառքի համար մատչելի ներդրումների վերագնահատման պահուստ

Այս պահուստը արտացոլում է վաճառքի համար մատչելի ներդրումների իրական արժեքի փոփոխությունները:

4.19 Հաշվանցում

Ֆինանսական ակտիվները և պարտավորությունները, եկամուտներն ու ծախսերը ֆինանսական հաշվետվություններում ներկայացվում են հաշվանցված, եթե գոյություն ունի օրենսդրորեն հաստատված իրավունք իրականացնելու հաշվառված գումարների հաշվանցում, ինչպես նաև մտադրություն իրականացնելու հաշվանցում կամ միաժամանակ իրացնելու ակտիվը և մարելու պարտավորությունը:

Եկամուտները և ծախսերը ներկայացվում են զուտ արժեքի հիման վրա, միայն երբ դա թույլատրվում է համաձայն ՖՀՄՍ, կամ մի խումբ համանման գործարքների օգուտի և վնասի համար, ինչպիսին հանդիսանում է Ընկերության առևտրային գործունեությունը:

5 Կարևորագույն հաշվապահական գնահատումներ և դատողություններ

ՖՀՄՍ համաձայն ֆինանսական հաշվետվությունների պատրաստումը պահանջում է, որ Ընկերության ղեկավարությունը կատարի կարևորագույն հաշվապահական գնահատումներ, դատողություններ և ենթադրություններ, որոնք ազդեցություն են թողնում ֆինանսական հաշվետվությունների ամսաթվի դրությամբ ակտիվների և պարտավորությունների ներկայացվող գումարների, ինչպես նաև հաշվետու ժամանակաշրջանի եկամուտների և ծախսերի վրա: Գնահատումները և դրանց հետ կապված ենթադրությունները, հիմնված պատմական փորձի և այլ գործոնների վրա, հիմք են հանդիսանում դատողություններ անելու այն ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքների վերաբերյալ, որոնց արժեքը հնարավոր չէ որոշել այլ վստահելի աղբյուրներից: Ամեն դեպքում, չնայած գնահատումները հիմնվում են ղեկավարության կողմից ընթացիկ իրադարձությունների լավագույն պատկերացումների վրա, փաստացի արդյունքները վերջին հաշվով կարող են տարբերվել կատարված գնահատումներից:

Ներկայացվող ֆինանսական հաշվետվությունների առումով նշանակալից դատողությունները և գնահատումները ներկայացվում են ստորև:

Ապահովագրության պայմանագրերի գծով պարտավորություններ

Ապահովագրության պայմանագրերի համար գնահատումները պետք է կատարվեն ինչպես հաշվեկշռի ամսաթվի դրությամբ ներկայացված ակնկալվող պահանջների վերջնական արժեքի համար, այնպես էլ այն ակնկալվող պահանջների արժեքի համար, որոնք տեղի են ունեցել,

սակայն դեռևս չեն ներկայացվել հաշվեկշռի ամսաթվի դրությամբ (ՏՀՊՊ): Պահանջների վերջնական արժեքը հստակորեն որոշելու համար կարող է զգալի ժամանակ պահանջվել և որոշ պայմանագրերի դեպքում, տեղի ունեցած, սակայն չներկայացված պահանջները կազմում են հաշվեկշռի պարտավորությունների մեծ մասը:

Այս գնահատումների հիմքում ընկած հիմնական ենթադրությունը կայանում է նրանում, որ Ընկերության անցյալ պահանջները կարող են օգտագործվել պահանջների հետագա զարգացումը և, հետևաբար նաև, պահանջների վերջնական արժեքը կանխատեսելու համար: Որպես այդպիսին, այս մեթոդներն արտացոլում են վճարված և տեղի ունեցած վնասները, յուրաքանչյուր պահանջի գծով միջին ծախսերը, նախորդ տարիներում հետազոտված պահանջների քանակը և ակնկալվող վնասաբերության ցուցանիշները: Պահանջների պատմական զարգացումը հիմնականում վերլուծվում է տվյալ տարվա համար, սակայն կարող է նաև վերլուծվել աշխարհագրական տարածքից ելնելով, ինչպես նաև ըստ նշանակալի ապահովագրական դասերի: Հիմնական դժվարությունը կայանում է նրանում, որ Հայաստանի ապահովագրական շուկան համեմատաբար նոր է և անկայուն, այդուամենայնիվ, զրեթե անհնար է կատարել ապագա գնահատումներ՝ հիմնվելով պատմական տվյալների վրա:

Ընկերությունը գնահատում է ներկայացված պահանջները «դեպք-առ-դեպքե մեթոդով:

Իրական արժեքի չափումը

Ֆինանսական գործիքների (երբ ակտիվ շուկայի գնանշումներ չկան) և ոչ ֆինանսական ակտիվների իրական արժեքը սահմանելու համար ղեկավարությունն օգտագործում է գնահատման տեխնիկան: Սա ներառում է զարգացող գնահատումները և ենթադրությունները համապատասխան նրան, թե շուկայի մասնակիցները ինչպես կգնահատեն գործիքները: Ղեկավարությունն իր ենթադրություններում որքան հնարավոր է հիմնվում է դիտարկվող տվյալների վրա, սակայն դրանք միշտ չէ, որ հասանելի են: Այդ դեպքում, ղեկավարությունն օգտագործում է իր ունեցած ամենալավ տեղեկատվությունը: Գնահատված իրական արժեքը կարող է տարբերվել փաստացի արժեքից, որը հաշվետու ժամանակաշրջանի դրությամբ կարող է հասանելի լինել անհատական գործարքների դեպքում (տես՝ ծանոթագրություն 33):

Ներդրումային արժեթղթերի դասակարգում

Ընկերության ներդրումային արժեթղթերը ներառում են պետական և ոչ պետական պարտատոմսերը: Սկզբնական ճանաչման ժամանակ Ընկերությունը դասակարգում է արժեթղթերը որպես վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ, որոնց իրական արժեքի ճշգրտումն իրականացվում է կապիտալում:

Հիմնական միջոցների օգտակար ծառայության ժամկետ

Հիմնական միջոցների օգտակար ծառայության ժամկետի գնահատումը դատողության արդյունք է՝ հիմնված նման ակտիվի հետ կապված փորձի վրա: Ապագա տնտեսական օգուտները մարմնավորվում են ակտիվներում և սպառվում հիմնականում օգտագործմանը զուգընթաց: Այնուամենայնիվ, այնպիսի գործոնները, ինչպիսիք են գործառնական, տեխնիկական կամ առևտրային մաշվածությունները, հաճախ հանգեցնում են ակտիվի տնտեսական օգուտների նվազեցմանը: Ղեկավարությունը մնացորդային օգտակար ծառայության ժամկետը գնահատում է ակտիվի ընթացիկ տեխնիկական վիճակին համապատասխան և ըստ այն գնահատված ժամանակաշրջանի, որի ընթացքում Ընկերության կանխատեսում է ստանալ օգուտներ: Մնացորդային օգտակար ծառայության ժամկետի գնահատման համար հաշվի են առնվում հետևյալ հիմնական գործոններն. ակտիվների կանխատեսվող օգտագործումը, գործառնական գործոններից և պահպանման ծրագրից կախված՝ մաշվածությունը և շուկայական պայմանների փոփոխություններից առաջացող տեխնիկական և առևտրային մաշվածությունը:

Կապակցված կողմերի հետ գործառնություններ

Ընկերությունն իր գործունեության ընթացքում իրականացնում է գործառնություններ կապակցված կողմերի հետ: Նշված գործառնությունները հիմնականում իրականացվում են շուկայական պայմաններով: Գործող շուկայի բացակայության դեպքում Ընկերությունը կատարում է դատողություններ գործառնությունների շուկայական կամ ոչ շուկայական բնույթի վերաբերյալ: Դատողությունները հիմնվում են այլ հաճախորդների հետ նմանատիպ գործառնությունների, ինչպես նաև արդյունավետ դրույքների վերլուծությունների վրա (տես՝ ծանոթագրություն 32):

Դեբիտորական պարտքերի գծով արժեզրկումից պահուստներ

Ընկերությունը գնահատում է խնդրահարույց դեբիտորական պարտքերը յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի համար՝ պարզելու համար, թե արդյոք անհրաժեշտ է արժեզրկման պահուստ ձևավորել ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում: Մասնավորապես, ղեկավարության դատողությունն անհրաժեշտ է ապագա դրամական հոսքերի գումարը և պարբերականությունը գնահատելու համար, երբ անհրաժեշտ է պահանջվող պահուստի չափը որոշել: Նման գնահատումները հիմնված են որոշ գործոնների շուրջ ենթադրությունների վրա և ներկա արդյունքները կարող են տարբերվել՝ հանգեցնելով պահուստում հետագա փոփոխությունների:

Նշանակալի դեբիտորական պարտքերի համար անհատական ստեղծված հատուկ պահուստներից բացի, Ընկերությունը նաև ստեղծում է արժեզրկման խմբային պահուստներ այն ռիսկերի գծով, որոնք չնայած որ անհատապես չեն գնահատվել, սակայն պարունակում են չվճարման ավելի մեծ ռիսկ, քան սկզբնապես որոշվել էր: Սա հաշվի է առնում այնպիսի գործոնների ազդեցությունը, ինչպիսիք են վատթարացումը երկրի և արդյունաբերության ռիսկում և տեխնոլոգիական հնացումը, ինչպես նաև բացահայտված կառուցվածքային թերությունները կամ դրամական հոսքերի նվազումները:

Հարկային օրենսդրություն

ՀՀ հարկային օրենսդրությունը ենթակա է տարակարծիք մեկնաբանությունների: Տես 31 ծանոթագրությունը:

Ընկերության ղեկավարությունը չի վերանայել իր նախորդ գնահատումները, այսինքն չի ապաճանաչել հիմնական միջոցների հետ կապված իր նախկինում գնահատված հետաձգված հարկային պարտավորությունը և շարունակում է կատարել իր հարկային հաշվառումը, ինչպես նախկինում:

6 Հիմնական միջոցներ

Հազար ՀՀ դրամ

	Շենքեր	Համակարգ- չային տեխնիկա և կապի միջոցներ	Փոխադրա- միջոցներ	Գրասե- յակային սարքա- վորումներ	Այլ հիմնական միջոցներ	Ընդամենը
Սկզբնական կամ վերագնահատված արժեք						
2016թ. հունվարի 1-ի դրությամբ	433,473	85,169	120,581	37,455	66,846	743,524
Ավելացում	-	15,196	52,811	4,028	11,446	83,481
Օտարում	-	-	(5,000)	-	-	(5,000)
Վերագնահատում	-	2,377	-	2,581	684	5,642
Վերագնահատման արդյունքում մաշվածության ճշգրտում		(16,393)	-	(6,213)	(8,178)	(30,784)
2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	433,473	86,349	168,392	37,851	70,798	796,863
Ավելացում	3,793	12,730	-	5,604	6,442	28,569
Օտարում	-	-	(10,872)	-	(2,200)	(13,072)
2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	437,266	99,079	157,520	43,455	75,040	812,360

Հազար ՀՀ դրամ

	Շենքեր	Համակարգ- չային տեխնիկա և կապի միջոցներ	Փոխադրա- միջոցներ	Գրասե- յակային սարքա- վորումներ	Այլ հիմնական միջոցներ	Ընդամենը
Կուտակված մաշվածություն						
2016թ. հունվարի 1-ի դրությամբ	127,822	62,573	23,962	25,796	30,177	270,330
Հատկացումներ	7,172	9,973	18,914	3,429	8,196	47,684
Օտարում	-	-	(1,401)	-	-	(1,401)
Վերագնահատման արդյունքում մաշվածության ճշգրտում	-	(16,393)	-	(6,213)	(8,178)	(30,784)
2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	134,994	56,153	41,475	23,012	30,195	285,829
Հատկացումներ	7,330	10,261	20,443	2,785	8,041	48,860
Օտարում	-	-	(6,856)	-	(1,088)	(7,944)
2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	142,324	66,414	55,062	25,797	37,148	326,745
Հաշվեկշռային արժեք						
2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	298,479	30,196	126,917	14,839	40,603	511,034
2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	294,942	32,665	102,458	17,658	37,892	485,615

Ակտիվների վերագնահատում

Ընկերության համակարգչային տեխնիկայի և կապի միջոցների, գրասենյակային սարքավորումները և այլ հիմնական միջոցների վերագնահատումը կատարվել է 2016թ. հոկտեմբերի 31-ին անկախ գնահատողների կողմից՝ կիրառելով համեմատական, ծախսային և եկամտային մեթոդները, որի արդյունքում առաջացել է վերագնահատում 5,642 հազար դրամ գումարով: Իրական արժեքով գնահատման համար Ղեկավարությունը հիմք է ընդունում անկախ գնահատողների կողմից ներկայացված արդյունքները:

Ղեկավարության գնահատմամբ 2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ շենքերի վերագնահատված արժեքն էականորեն չի տարբերվում դրանց շուկայական արժեքից:

Եթե վերագնահատված հիմնական միջոցները ներկայացվեին սկզբնական արժեքի մոդելի կիրառմամբ, ապա հաշվեկշռային արժեքները կունենան հետևյալ տեսքը՝

Հազար ՀՀ դրամ	2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Սկզբնական արժեք	553,285	526,916
Կուտակված մաշվածություն	(100,107)	(205,503)
Հաշվեկշռային արժեք	<u>453,178</u>	<u>321,413</u>

Ամբողջությամբ մաշված ակտիվներ

2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ հիմնական միջոցների ցանկում ներառված ամբողջությամբ մաշված ակտիվներ չկան (2016թ. ոչինչ):

Հիմնական միջոցների սահմանափակումներ

2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերությունը չունի գրավադրված գույք (2016թ. նույնպես):

7 Ոչ նյութական ակտիվներ

Հազար ՀՀ դրամ	Համակարգչային ծրագրեր	Ընդամենը
Սկզբնական արժեք		
2016թ. հունվարի 1-ի դրությամբ	21,376	21,376
Ավելացում	3,730	3,730
2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	25,106	25,106
Ավելացում	-	-
2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	25,106	25,106

Հազար ՀՀ դրամ

	Համակարգչային ծրագրեր	Ընդամենը
<i>Կուրսակված ամորտիզացիա</i>		
2016թ. հունվարի 1-ի դրությամբ	4,461	4,461
Մասհանումներ	2,137	2,137
2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	6,598	6,598
Մասհանումներ	4,450	4,450
2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	11,048	11,048
Մնացորդային արժեք		
2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	18,508	18,508
2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	14,058	14,058

2017թ-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերությունը չի տիրապետել պարտավորությունների դիմաց գրավադրված կամ որևէ այլ սահմանափակման ենթակա ոչ նյութական ակտիվներ:

8 Այլ ակտիվներ

Հազար ՀՀ դրամ

	2017	2016
Կանխավճարներ հատուցումների գծով	220,035	171,572
Այլ կանխավճարներ	75,964	80,057
Առհաշիվ տրված գումարներ	11,891	22,026
Կանխավճարներ այլ հարկերի գծով	8,289	10,026
Բռնագանձված ակտիվներ	1,387	1,387
Այլ	13,000	13,000
Արժեզրկման կորուստների պահուստ	(55,111)	(1,957)
Ընդամենը այլ ակտիվներ	275,455	296,111

Բռնագանձված գրավն իրենից ներակայացնում է սուբրոգացիայի հետևանքով Ընկերության սեփականությանն անցած հող:

Այլ ակտիվների գծով արժեզրկման կորուստների պահուստի շարժը հետևյալն է.

Հազար ՀՀ դրամ	<u>Ընդամենը</u>
2016թ. հունվարի 1-ի դրությամբ	<u>2,058</u>
Տարվա ծախս	23,794
Դուրսգրում	(23,899)
Վերադարձ	4
2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	<u>1,957</u>
Տարվա ծախս	52,587
Դուրսգրում	(643)
Վերադարձ	1,210
2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	<u>55,111</u>

9 Հետաձգված ձեռքբերման ծախսեր

Հետևյալ աղյուսակը ներկայացնում է տվյալ ժամանակաշրջանի համար հետաձգված ձեռքբերման ծախսերի շարժը.

Հազար ՀՀ դրամ	<u>Ընդամենը</u>
2016թ. հունվարի 1-ի դրությամբ	<u>235,785</u>
Հետաձգված ձեռքբերման ծախսեր	464,450
Ծախսի ճանաչում (Ծանոթ. 26)	(458,668)
2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	<u>241,567</u>
Հետաձգված ձեռքբերման ծախսեր	439,909
Ծախսի ճանաչում (Ծանոթ. 26)	(452,908)
2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	<u>228,568</u>

10 Ապահովագրության գծով դեբիտորական պարտքեր

Հազար ՀՀ դրամ	2017	2016
Պահանջներ ապահովադիրների և գործակալների նկատմամբ	373,575	616,923
Պահանջներ վերաապահովագրողների նկատմամբ	31,654	31,017
Սուբրոգացիա	45,375	56,987
Արժեզրկումից պահուստ	(30,597)	(41,543)
Ընդամենը ապահովագրության գծով դեբիտորական պարտքեր	420,007	663,384

Տարվա ընթացքում արժեզրկումից պահուստի շարժը ապահովագրության գծով դեբիտորական պարտքերի գծով հետևյալն է.

Հազար ՀՀ դրամ	Ընդամենը
2016թ. հունվարի 1-ի դրությամբ	41,686
Տարվա ծախս	32,009
Դուրս գրում	(53,077)
Վերադարձ	20,925
2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	41,543
Տարվա ծախս	21,389
Դուրս գրում	(53,958)
Վերադարձ	21,623
2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	30,597

11 Ֆիզիկական անձանց տրամադրված փոխառություններ

Հազար ՀՀ դրամ	2017	2016
Տրամադրված փոխառություններ	8,857	10,398
Արժեզրկման կորուստների պահուստ	(225)	(464)
Ընդամենը ֆիզիկական անձանց տրամադրված փոխառություններ	8,632	9,934

Ֆիզիկական անձանց տրամադրված փոխառությունների արժեզրկումից պահուստի շարժը հետևյալն է.

Հազար ՀՀ դրամ	<u>Ընդամենը</u>
2016թ. հունվարի 1-ի դրությամբ	1,122
Տարվա ծախս	1,351
Դուրսգրում	(2,149)
Վերադարձ	140
2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	<u>464</u>
Տարվա ծախս	562
Դուրս գրում	(1,036)
Վերադարձ	235
2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	<u><u>225</u></u>

12 Պահանջներ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ

Հազար ՀՀ դրամ	<u>2017</u>	<u>2016</u>
Ավանդներ	2,189,413	1,846,083
Ընդամենը պահանջներ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	<u><u>2,189,413</u></u>	<u><u>1,846,083</u></u>

Ավանդները ժամկետանց կամ արժեզրկված չեն:

Ավանդները բանկերում ունեն 90 օրից ավել մարման ժամկետ կամ կարճաժամկետ են, բայց պարբերաբար մարման ժամկետները վերանայվում են և երկարաձգվում:

2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական կազմակերպություններում ավանդները՝ 1,476,000 հազար դրամ գումարով (71%) կենտրոնացված են 6 բանկերում (2016թ.՝ 1,381,022 հազար դրամ (75%) կենտրոնացված 5 բանկերում):

2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ժամկետային ավանդներից 110,000 հազար դրամ գումարը ներդրվել է Ընկերության կողմից՝ որպես բանկերից ստացված վարկերի գծով երաշխիք (2016թ.՝ ոչինչ) (տես ծանոթագրություն 16):

13 Վաճառքի համար մատչելի ներդրումներ

Հազար ՀՀ դրամ	2017	2016
Չգնանշվող ներդրումներ		
ՀՀ պետական պարտատոմսեր	5,236	7,182
ՀՀ կազմակերպությունների բաժնետոմսեր	35,000	35,000
Ընդամենը վաճառքի համար մատչելի ներդրումներ	40,236	42,182

Բոլոր պարտքային արժեթղթերն ունեն հաստատուն տոկոսներ:

Չգնանշված վաճառքի համար մատչելի պարտքային արժեթղթերի իրական արժեքը չափվում է՝ կիրառելով գնահատման մեխանիզմ, որն օգտագործում է ներկա շուկայական դրույքները՝ ապագա դրամական հոսքերը գեղջելու համար:

Բոլոր չգնանշվող վաճառքի համար մատչելի բաժնեմասային արժեթղթերը գրանցված են ինքնարժեքով, քանի որ իրական արժեքը չի կարող արժանահավատորեն գնահատվել: Այս ներդրումների համար չկա գնանշվող շուկա և Ընկերությունը նախատեսում է դրանք պահել երկար ժամկետով:

Վաճառքի համար մատչելի արժեթղթերն ըստ արդյունավետ տոկոսադրույքների և ժամկետների ներառում են.

Հազար ՀՀ դրամ	2017		2016	
	%	Ժամկետ	%	Ժամկետ
ՀՀ պետական պարտատոմսեր	9.00	2019	9.70	2020

Վաճառքի համար մատչելի պարտքային արժեթղթերը 768,421 հազար դրամով իրական արժեքով (2016թ.՝ 141,596 հազար դրամ), վաճառվել են երրորդ անձանց ռեպո համաձայնագրերով՝ 6 ամիսը չգերազանցող ժամանակահատվածներով: Դրանք վերադասակարգվել են որպես ռեպո համաձայնագրերով գրավադրված արժեթղթեր հաշվապահական հաշվեկշռում՝ առանձին տողում (Ծանոթ. 21):

14 Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ

Հազար ՀՀ դրամ	2017	2016
Կանխիկ դրամական միջոցներ	1,306	1,612
Բանկային հաշիվներ	59,018	13,603
Ընդամենը դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	60,324	15,215

2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ 44,931 հազար դրամ գումարով (76%) կենտրոնացված է 2 բանկում (2016թ.՝ 11,376 հազար դրամ (84%) կենտրոնացված է մեկ բանկում):

15 Սեփական կապիտալ

2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերության գրանցված և ամբողջությամբ վճարված բաժնետիրական կապիտալը կազմում էր 1,971,000 հազար դրամ: Համաձայն Ընկերության կանոնադրության, բաժնետիրական կապիտալը կազմված է թվով 197,100 բաժնետոմսերից՝ յուրաքանչյուրը 10,000 դրամ անվանական արժեքով:

2017թ. և 2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերության բաժնետերերն են.

Հազար ՀՀ դրամ	2017		2016	
	Վճարված բաժնետիրական կապիտալ	Բաժնեմասը վճարված կապիտալում, %	Վճարված բաժնետիրական կապիտալ	Բաժնեմասը վճարված կապիտալում, %
Խաչատուր Սուքիասյան	492,750	25	492,750	25
Սարիբեկ Սուքիասյան	492,750	25	492,750	25
Ռոբերտ Սուքիասյան	492,750	25	492,750	25
Էդուարդ Սուքիասյան	492,750	25	492,750	25
	<u>1,971,000</u>	<u>100</u>	<u>1,971,000</u>	<u>100</u>

2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերության կողմից հետ գնված բաժնետոմսեր չեն եղել:

Սովորական բաժնետոմսերի բաժնետերերը իրավունք ունեն ստանալու շահաբաժին և մեկ ձայնի իրավունք Ընկերության տարեկան և ընդհանուր ժողովներում:

Բաշխման ենթակա Ընկերության պահուստները սահմանափակվում են կուտակված շահույթով՝ հաշվարկված համաձայն ՀՀ օրենսդրության: Բաշխման ոչ ենթակա միջոցները ներկայացված են գլխավոր պահուստով, որը ստեղծված է համաձայն ՀՀ օրենսդրության պահանջների՝ ընդհանուր ֆինանսական ռիսկերը, ներառյալ հնարավոր կորուստները և այլ չնախատեսված ռիսկերը և ծախսերը փոխհատուցելու նպատակով: Պահուստը ստեղծվել է համաձայն Ընկերության կանոնադրության, որը նախատեսում է պահուստի ստեղծում այդ նպատակների համար ոչ պակաս քան հաշվապահական հաշվառման հաշիվներում արտացոլված բաժնետիրական կապիտալի 15%-ի չափով:

16 Բանկերից ստացված վարկեր

Հազար ՀՀ դրամ	2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Բանկերից ստացված վարկեր	100,656	-
Ընդամենը բանկերից ստացված վարկեր	<u>100,656</u>	<u>-</u>

Բանկերից ստացված վարկերն ունեն հաստատուն տոկոսադրույք:

Հաշվետու ժամականաշրջանում Ընկերությունը չի ունեցել մայր գումարի, տոկոսների չվճարումներ կամ այլ խախտումներ (2016թ.՝ նույնպես):

2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ստացված վարկերի ապահովման միջոց են հանդիսանում Ընկերության կողմից ներդրված ժամկետային ավանդներ 110,000 հազար դրամ հաշվեկշռային արժեքով:

17 Ստորադաս փոխառություն

Հազար ՀՀ դրամ

	2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Ստացված ստորադաս փոխառություն	295,048	-
Ընդամենը ստորադաս փոխառություն	295,048	-

2017թ. ընթացքում Ընկերությունը կապակցված անձից ստացել է 483,500 հազար դրամի չափով ստորադաս փոխառություն, որի մարման ժամկետը սահմանցված է 2027 թվականը: Տոկոսարույքը կազմել է 5%: Փոխառությունը իրական արժեքով վերահաշվարկման արդյունքում ստացված տարբերությունը 191,375 հազար դրամ գումարի չափով ճանաչվել է սեփական կապիտալում՝ որպես լրացուցիչ կապիտալ:

18 Ապահովագրության պայմանագրերի գծով պարտավորություններ

Հազար ՀՀ դրամ

	2017			2016		
	Ապահովագրության պայմանագրերի գծով պարտավորություն	Վերապահովագրական ակտիվներ	Զուտ պարտավորություններ	Ապահովագրության պայմանագրերի գծով պարտավորություն	Վերապահովագրական ակտիվներ	Զուտ պարտավորություններ
Զվաստակած ապահովագրական վճարներ	1,355,888	(100,967)	1,254,921	1,389,931	(113,572)	1,276,359
Տեղի ունեցած, սակայն չներկայացված պահանջներ	122,329	(3,998)	118,331	112,559	(4,342)	108,217
Ներկայացված պահանջներ	89,844	(7,725)	82,119	239,262	(9,223)	230,039
Դեկտեմբերի 31-ի դրությամբ	1,568,061	(112,690)	1,455,371	1,741,752	(127,137)	1,614,615

Ծանոթագրության հաջորդ աղյուսակները ցույց են տալիս ապահովագրական պարտավորությունների և համապատասխան վերապահովագրական ակտիվների գծով փոփոխությունները հաշվետու ժամանակաշրջանների համար:

Չվաստակաժ ապահովագրավճարներ

Հազար ՀՀ դրամ

	Ապահովագրական պարտավորություն- ներ	Վերաապահովա- գրական ակտիվներ	Զուտ պարտավորություն եր
2016թ. հունվարի 1-ի դրությամբ	1,305,680	(86,118)	1,219,562
Տարվա ապահովագրավճարներ	3,720,711	(276,887)	3,443,824
Տարվա վաստակաժ ապահովագրավճարներ	(3,636,460)	249,433	(3,387,027)
2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	1,389,931	(113,572)	1,276,359
Տարվա ապահովագրավճարներ	3,715,302	(234,391)	3,480,911
Տարվա վաստակաժ ապահովագրավճարներ	(3,749,345)	246,996	(3,502,349)
2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	1,355,888	(100,967)	1,254,921

Պահանջների պահուստ

Հազար ՀՀ դրամ

	Ապահովագրության պայմանագրերի գծով պարտավորութ- յուններ	Վերաապահովա- գրական ակտիվներ	Զուտ պարտավորություն եր
2016թ. հունվարի 1-ի դրությամբ	333,957	(60,464)	273,493
ՆՉՊՊ և ՏՉՊՊ ընդհանուր փոփոխություն	1,933,626	(33,645)	1,899,981
Վճարված հատուցումներ	(1,915,762)	80,544	(1,835,218)
2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	351,821	(13,565)	338,256
Տեղի ունեցած, սակայն չներկայացված պահանջներ	112,559	(4,342)	108,217
Ներկայացված պահանջներ	239,262	(9,223)	230,039
2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	351,821	(13,565)	338,256
ՆՉՊՊ և ՏՉՊՊ ընդհանուր փոփոխություն	2,153,507	(73,486)	2,080,021
Վճարված հատուցումներ	(2,293,155)	75,328	(2,217,827)
2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	212,173	(11,723)	200,450
Տեղի ունեցած, սակայն չներկայացված պահանջներ	122,329	(3,998)	118,331
Ներկայացված պահանջներ	89,844	(7,725)	82,119
2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	212,173	(11,723)	200,450

19 Ապահովագրության գծով կրեդիտորական պարտքեր

Հազար ՀՀ դրամ	2017	2016
Ապահովադիրներին վճարվելիք գումարներ	10,174	9,871
Վերաապահովագրողներին վճարվելիք գումարներ	88,515	92,667
Գործակալներին, բրոքերներին և միջնորդներին վճարվելիք գումարներ	2,083	2,251
Այլ	104	-
Ընդամենը ապահովագրության գծով կրեդիտորական պարտքեր	100,876	104,789

20 Այլ պարտավորություններ

Հազար ՀՀ դրամ	2017	2016
<i>Այլ պարտավորություններ (ֆինանսական)</i>		
Վճարվելիք գումարներ	25,756	26,875
Պարտավորություն անձնակազմի նկատմամբ	45,180	43,008
	70,936	69,883
<i>Այլ պարտավորություններ (ոչ ֆինանսական)</i>		
Պարտավորություններ հարկերի գծով՝ բացառությամբ շահութահարկի	15,345	24,544
Ապագա ժամանակաշրջանի եկամուտներ	7,805	7,541
	23,150	32,085
Ընդամենը այլ պարտավորություններ	94,086	101,968

Ապագա ժամանակաշրջանի եկամուտները վերաբերում են հետաձգված վերաապահովագրության միջնորդավճարներին, որոնց շարժը ներկայացված է ստորև.

Հազար ՀՀ դրամ	Ընդամենը
2016թ. հունվարի 1-ի դրությամբ	5,007
Հետաձգված վերաապահովագրության միջնորդավճարներ	18,583
Եկամուտի ճանաչում (ծանոթ. 23)	(16,049)
2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	7,541
Հետաձգված վերաապահովագրության միջնորդավճարներ	14,710
Եկամուտի ճանաչում (ծանոթ. 23)	(14,446)
2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	7,805

21 Հետզնման պայմանագրերով գրավադրված արժեթղթեր

Հազար ՀՀ դրամ

	Ակտիվ		Պարտավորություն	
	2017	2016	2017	2016
Վաճառքի համար մատչելի ներդրումներ (ծանոթ. 13)	768,421	141,596	725,383	134,405
	<u>768,421</u>	<u>141,596</u>	<u>725,383</u>	<u>134,405</u>

Գրավադրված արժեթղթերը այն ֆինանսական ակտիվներն են, որոնք գրավադրված են հետզնման պայմանագրերով բանկերում, գործընկերոջ կողմից վաճառելու և կրկին վերագրավադրելու իրավունքով:

Այս գործարքները կատարվել են ստանդարտ վարկավորման, արժեթղթերի փոխառության և վարկավորման սովորական պայմանների ներքո:

22 Ապահովագրավճարներ

Հազար ՀՀ դրամ

2017

	Համախառն ապահովա- գրավճարներ	Փոփոխություն չվաստակաժ ապահովա- գրավճարների համախառն պահուստում	Համախառն ապահովա- գրավճարների գծով հասույթ	Վերաապա- հովագրողների փոխանցված ապահովագրավճար ներ	Վերաապա- հովագրողների մասը չվաստակաժ ապահովա- գրավճարների համախառն պահուստի փոփոխությունում	Փոխանցված վաստակաժ ապահովա- գրավճարներ	Ապահովա- գրավճար- ների գծով զուտ հասույթ
Դժբախտ պատահարներից ապահովագրություն	36,936	(5,016)	31,920	(13,597)	2,569	(11,028)	20,892
Առողջության ապահովագրություն	871,288	68,340	939,628	(2,591)	958	(1,633)	937,995
Ցամաքային տրանսպորտի ապահովագրություն	219,256	22,313	241,569	(80,265)	1,120	(79,145)	162,424
Փոխադրվող գույքի (բեռների) ապահովագրություն	79,327	1,241	80,568	(41,784)	(746)	(42,530)	38,038
Հրդեհից, բնական աղետներից և գույքին հասցված այլ վնասներից ապահովագրություն	163,672	(6,275)	157,397	(49,151)	1,116	(48,035)	109,362
Ցամաքային ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության կամավոր ապահովագրություն	3,488	(224)	3,264	(1730)	17	(1,713)	1,551
Ընդհանուր պատասխանատվության ապահովագրություն	60,272	32,029	90,301	(21,340)	(29,470)	(50,810)	39,491
Ֆինանսական վնասների ապահովագրություն	34,624	(16,508)	18,116	(23,933)	11,831	(12,102)	6,014
Աջակցության ապահովագրություն	28,196	(793)	27,403	-	-	-	27,403
Ցամաքային ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրություն	2,218,243	(61,064)	2,157,179	-	-	-	2,157,179
Դեկտեմբերի 31-ի դրությամբ	3,715,302	34,043	3,749,345	(234,391)	(12,605)	(246,996)	3,502,349

	Համախառն ապահովա- գրավճարներ	Փոփոխություն չվաստակաժ ապահովա- գրավճարների համախառն պահուստում	Համախառն ապահովա- գրավճարների գծով հասույթ	Վերաապա- հովագրողներին փոխանցված ապահովա- գրավճարներ	Վերաապահովագ- րողների մասը չվաստակաժ ապահովագրա- վճարների համախառն պահուստի փոփոխությունում	Փոխանցված վաստակաժ ապահովա- գրավճարներ	Ապահովա- գրավճար- ների գծով զուտ հասույթ
Դժբախտ պատահարներից ապահովագրություն	34,237	(716)	33,521	(10,984)	90	(10,894)	22,627
Առողջության ապահովագրություն	891,547	40,986	932,533	-	-	-	932,533
Ցամաքային տրանսպորտի ապահովագրություն	285,026	31,237	316,263	(85,621)	(1,287)	(86,908)	229,355
Փոխադրվող գույքի (բեռների) ապահովագրություն	73,607	(3,316)	70,291	(35,107)	2,032	(33,075)	37,216
Հրդեհից, բնական աղետներից և գույքին հասցված այլ վնասներից ապահովագրություն	152,054	(7,486)	144,568	(46,559)	2,041	(44,518)	100,050
Ցամաքային ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության կամավոր ապահովագրություն	3,601	(99)	3,502	(1,822)	(36)	(1,858)	1,644
Ընդհանուր պատասխանատվության ապահովագրություն	137,949	(31,310)	106,639	(85,200)	17,359	(67,841)	38,798
Ֆինանսական վնասների ապահովագրություն	18,057	(10,977)	7,080	(11,594)	7,255	(4,339)	2,741
Աջակցության ապահովագրություն	15,898	(702)	15,196	-	-	-	15,196
Ցամաքային ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրություն	2,108,735	(101,868)	2,006,867	-	-	-	2,006,867
Դեկտեմբերի 31-ի դրությամբ	3,720,711	(84,251)	3,636,460	(276,887)	27,454	(249,433)	3,387,027

23 Վերաապահովագրության միջնորդավճարների գծով զուտ եկամուտ

Հազար ՀՀ դրամ

	2017		2016			
Վերաապահովագրության միջնորդավճար	Վերաապահովագրության միջնորդավճարների դադարեցումների գծով	Զուտ վերաապահովագրության միջնորդավճար	Վերաապահովագրության միջնորդավճարների դադարեցումների գծով	Զուտ վերաապահովագրության միջնորդավճար		
Դժբախտ պատահարներից ապահովագրություն	2,379	(17)	2,362	2,360	(18)	2,342
Առողջության ապահովագրություն	259	(265)	(6)	-	-	-
Փոխադրվող գույքի (բեռների) ապահովագրություն	1,134	-	1,134	1,496	-	1,496
Հրդեհից և բնական աղետներից ապահովագրություն	242	-	242	181	-	181
Ընդհանուր պատասխանատվության ապահովագրություն	10,870	(173)	10,697	12,760	(730)	12,030
Ֆինանսական վնասների ապահովագրություն	17	-	17	-	-	-
Ընդամենը	14,901	(455)	14,446	16,797	(748)	16,049

24 Ներդրումային եկամուտ

Հազար ՀՀ դրամ

	2017	2016
Ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ պահանջներից տոկոսային եկամուտ	220,754	282,991
Վաճառքի համար մատչելի արժեթղթերից տոկոսային եկամուտ	29,208	14,540
Այլ ներդրումային եկամուտ	-	977
Ընդամենը ներդրումային եկամուտ	249,962	298,508

25 Ապահովագրական հատուցումներ

Հազար ՀՀ դրամ

2017

	Դժբախտ պատահարներ	Առողջություն	Ցամաքային տրանսպորտ	Փոխադրվող գույք (բեռներ)	Հրդեհ և բնական աղետներ	Ցամաքային տրանսպորտի օգտագործու- մից բխող պատասխա- նատվություն	Ընդհանուր պատասխա- նատվություն	Աջակցության ապահովա- գրություն	ԱՊՊԱ	Ընդամենը
Ընթացիկ տարվա հատուցումներ	4,350	713,750	106,825	2,624	26,384	3,291	3,650	10,129	1,422,152	2,293,155
Փոփոխություն տեղի ունեցած, սակայն չներկայացված պահանջների պահուստում	119	(2,948)	(2,637)	44	902	45	113	688	13,446	9,772
Փոփոխություն ներկայացված, սակայն չկարգավորված պահանջների պահուստում	750	20,944	(10,684)	(77)	(4594)	(100)	(725)	3,617	(158,551)	(149,420)
Ապահովագրական հատուցումներ	5,219	731,746	93,504	2,591	22,692	3,236	3,038	14,434	1,277,047	2,153,507
Ընթացիկ տարվա հատուցումներում վերաապահովագրողի մաս	-	(8)	(62,931)	(2,098)	(9,427)	-	(864)	-	-	(75,328)
Տեղի ունեցած, սակայն չներկայացված պահանջների պահուստում վերաապահովագրողի մասի փոփոխություն	-	-	854	(35)	(453)	4	(25)	-	-	345

	Դժբախտ պատահարներ	Առողջություն	Ցամաքային տրանսպորտ	Փոխադրվող գույք (բեռներ)	Հրդեհ և բնական աղետներ	Ցամաքային տրանսպորտի օգտագործու- մից բխող պատասխա- նատվություն	Ընդհանուր պատասխա- նատվություն	Աջակցության ապահովա- գրություն	ԱՊՊԱ	Ընդամենը
Ներկայացված, սակայն չկարգավորված պահանջների պահուստում վերապահովագրողի մասի փոփոխություն	-	-	1,234	63	-	80	120	-	-	1,497
Ապահովագրական հատուցումներում վերապահովագրողի մաս	-	(8)	(60,843)	(2,070)	(9,880)	84	(769)	-	-	(73,486)
Զուտ ապահովագրական հատուցումներ	5,219	731,738	32,661	521	12,812	3,320	2,269	14,434	1,277,047	2,080,021

	Դժբախտ պատահարներ	Առողջություն	Ցամաքային տրանսպորտ	Փոխադրվող գույք (բեռներ)	Հրդեհ և բնական աղետներ	Ցամաքային տրանսպորտի օգտագործումից բխող պատասխանատվություն	Ընդհանուր պատասխանատվություն	Աջակցության ապահովագրություն	ԱՊՊԱ	Ընդամենը
Ընթացիկ տարվա հատուցումներ	6,810	793,909	147,298	1,721	3,801	2,296	669	1,526	957,732	1,915,762
Փոփոխություն տեղի ունեցած, սակայն չներկայացված պահանջների պահուստում	(3)	10,334	(2,124)	(1,220)	(557)	115	(9)	-	6,473	13,009
Փոփոխություն ներկայացված, սակայն չկարգավորված պահանջների պահուստում	(91)	50,969	(34,990)	(23,333)	(13,449)	-	2,280	-	23,469	4,855
Ապահովագրական հատուցումներ	6,716	855,212	110,184	(22,832)	(10,205)	2,411	2,940	1,526	987,674	1,933,626
Ընթացիկ տարվա հատուցումներում վերաապահովագրողի մաս	-	-	(78,652)	(1,329)	(364)	-	(199)	-	-	(80,544)
Տեղի ունեցած, սակայն չներկայացված պահանջների պահուստում վերաապահովագրողի մասի փոփոխություն	-	-	378	961	755	1	57	-	-	2,152
Ներկայացված, սակայն չկարգավորված պահանջների պահուստում վերաապահովագրողի մասի փոփոխություն	-	-	11,868	18,665	14,818	-	(604)	-	-	44,747
Ապահովագրական հատուցումներում վերաապահովագրողի մաս	-	-	(66,406)	18,297	15,209	1	(746)	-	-	(33,645)
Զուտ ապահովագրական հատուցումներ	6,716	855,212	43,778	(4,535)	5,004	2,412	2,194	1,526	987,674	1,899,981

26 Ձեռքբերման ծախսեր

Հազար ՀՀ դրամ	2017	2016
<i>Միջնորդավճարներ</i>		
Առողջություն	44,989	11,328
Ցամաքային տրանսպորտ	23,175	26,412
Բեռներ	10,336	6,173
Հրդեհից և բնական աղետներից ապահովագրություն	8,314	5,449
ԱՊՊԱ	351,582	399,373
Այլ	14,512	9,933
Ընդամենը ձեռքբերման ծախսեր	452,908	458,668

27 Ֆինանսական ծախսեր

Հազար ՀՀ դրամ	2017	2016
Տոկոսային ծախսեր ռեպո համաձայնագրերով վարկերից	19,560	9,618
Տոկոսաին ծախս ստորադաս փոխառության գծով	2,923	-
Տոկոսային ծախսեր բանկերից ստացված վարկերից	9,819	-
Այլ	-	1,954
Ընդամենը ֆինանսական ծախսեր	32,302	11,572

28 Այլ գործառնական և վարչական ծախսեր

Հազար ՀՀ դրամ	2017	2016
Անձնակազմի գծով ծախսեր	605,247	587,237
Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների պահպանման ծախսեր	76,104	78,466
Գովազդի ծախսեր	88,944	105,350
Գործուղման ծախսեր	3,647	8,377
Կապի և հաղորդակցման միջոցների գծով ծախսեր	31,491	30,834
Վարձակալության գծով ծախսեր	299,746	177,890
Հարկեր, (բացառությամբ շահութահարկի) և տուրքեր	13,400	26,157
Խորհրդատվական և այլ ծառայությունների գծով ծախսեր	12,800	10,200
Անվտանգության ծախսեր	5,157	3,910
Ներկայացուցչական ծախսեր	13,329	10,425
Բանկային ծախսեր	3,097	804
Գրասենյակային ծախսեր	37,797	12,846
Տոյժեր ու տուգանքներ	2,612	4,318
Անդամավճարներ, վճարներ Բյուրոյին	39,862	67,615
ԱՄՄՊ վճար	80,481	
Տպագրության գծով ծախսեր	2,415	4,583
Այլ ծախսեր	89,317	111,362
Ընդամենը այլ գործառնական և վարչական ծախսեր	1,405,446	1,240,374

29 Այլ ակտիվների և դեբիտորական պարտքերի արժեզրկման ծախս

Հազար ՀՀ դրամ	2017	2016
Ապահովագրության գծով դեբիտորական պարտքեր (ծանոթ. 10)	21,389	32,009
Ֆիզիկական անձանց տրամադրված փոխառություններ (ծանոթ. 11)	562	1,351
Այլ ակտիվներ (ծանոթ. 8)	52,587	23,794
Ընդամենը այլ ակտիվների և դեբիտորական պարտքերի արժեզրկման ծախս	74,538	57,154

30 Շահութահարկի գծով ծախս/(հակադարձում)

Հազար ՀՀ դրամ	2017	2016
Ընթացիկ հարկի գծով ծախս	-	22,190
Հետաձգված հարկ	(21,671)	9,158
Ընդամենը շահութահարկի գծով ծախս/(հակադարձում)	(21,671)	31,348

Հայաստանի Հանրապետությունում շահութահարկի դրույքաչափը կազմում է 20% (2016թ.՝ 20%): ՀՀ հարկային օրենսդրության և ՖՀՄՍ-ի միջև եղած տարբերությունը մի շարք ակտիվների և պարտավորությունների գծով առաջացնում է ժամանակավոր տարբերություններ ֆինանսական հաշվետվությունների կազմման նպատակներով դրանց հաշվեկշռային արժեքների և հարկման բազայի միջև: Հետաձգված շահութահարկի գումարը հաշվարկվում է 20% հիմնական դրույքաչափը կիրառելով:

Աուդիտորական եզրակացության ամսաթվի դրությամբ Ընկերությունը դեռ չի ներկայացրել շահութահարկի հաշվետվությունը հարկային մարմիններին, այդ պատճառով ընթացիկ հարկի գումարը կարող է փոփոխվել:

Ստորև ներկայացվում է շահութահարկի գծով ծախսի/(հակադարձման) և հաշվապահական շահույթի/(վնասի) միջև փոխկապակցվածությունը:

Հազար ՀՀ դրամ	2017	Արդյունավետ դրույքաչափ (%)	2016	Արդյունավետ դրույքաչափ (%)
Շահույթ/(վնաս) մինչև հարկումը	(256,932)		16,171	
Շահութահարկ՝ 20% դրույքաչափով	(51,386)	(20)	3,234	20
Չհարկվող եկամուտ	(8,071)	(3)	-	-
Չնվազեցվող ծախսեր	37,722	15	28,051	174
Արտարժույթի (դրական)/բացասական փոխարժեքային տարբերություն	64	-	63	-
Ընդամենը շահութահարկի գծով ծախս/(հակադարձում)	(21,671)	(8)	31,348	194

Ժամանակավոր տարբերությունների գծով հետաձգված հարկի հաշվարկ.

Հազար ՀՀ դրամ

	2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	Շահույթում կամ վնասում ճանաչված	Այլ համապարփակ ֆինանսական արդյունքում ճանաչված	2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Այլ պարտավորություններ	8,505	504	-	9,009
Ապագա ժամանակաշրջանի եկամուտներ	1,508	53	-	1,561
Այլ ակտիվներ	-	9,184	-	9,184
Ապահովագրության գծով կրեդիտորական պարտքեր	472	(377)	-	95
Փոխանցվող հարկային վնաս	-	15,375	-	15,375
Ընդամենը հետաձգված հարկային ակտիվ	10,485	24,739	-	35,224
Հիմնական միջոցներ	(11,337)	(518)	-	(11,855)
Ոչ նյութական ակտիվներ	(46)	-	-	(46)
Վաճառքի համար մատչելի ներդրումներ	(4,529)	-	(2,657)	(7,186)
Այլ ակտիվներ	(527)	527	-	-
Ապահովագրության գծով դեբիտորական պարտքեր	(254)	(1,281)	-	(1,535)
Պահանջներ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	(3,709)	(687)	-	(4,396)
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	(27)	(91)	-	(118)
Այլ ապահովագրական պահուստներ	(6,862)	(996)	-	(7,858)
Այլ պահուստներ	(798)	(22)	-	(820)
Ընդամենը հետաձգված հարկային պարտավորություն	(28,089)	(3,068)	(2,657)	(33,814)
Զուտ հետաձգված հարկային ակտիվ/(պարտավորություն)	(17,604)	21,671	(2,657)	1,410

Հազար ՀՀ դրամ

	2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	Շահույթում կամ վնասում ճանաչված	Այլ համապարփակ ֆինանսական արդյունքում ճանաչված	2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Այլ պարտավորություններ	7,834	671		8,505
Ապագա ժամանակաշրջանի եկամուտներ	1,002	506		1,508
Այլ ակտիվներ	8,193	(8,193)		-
Ապահովագրության գծով կրեդիտորական պարտքեր	1,895	(1,423)		472
Ընդամենը հետաձգված հարկային ակտիվ	19,047	(8,439)	(123)	10,485
Հիմնական միջոցներ	(10,504)	295	(1,128)	(11,337)
Ոչ նյութական ակտիվներ	-	(46)		(46)
Վաճառքի համար մատչելի ներդրումներ	-	-	(4,529)	(4,529)
Այլ ակտիվներ	(320)	(207)	-	(527)
Ապահովագրության գծով դեբիտորական պարտքեր	(293)	39	-	(254)
Պահանջներ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	(3,822)	113	-	(3,709)
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	(66)	39	-	(27)
Այլ ապահովագրական պահուստներ	(5,990)	(872)	-	(6,862)
Այլ պահուստներ	(718)	(80)	-	(798)
Ընդամենը հետաձգված հարկային պարտավորություն	(21,713)	(719)	(5,657)	(28,089)
Զուտ հետաձգված հարկային պարտավորություն	(2,666)	(9,158)	(5,780)	(17,604)

31 Պայմանական պարտավորություններ

Իրավական և հարկային պարտավորություններ

Հայաստանում հարկային համակարգը համեմատաբար նոր է, և նրան բնորոշ է օրենսդրության, պաշտոնական հայտարարությունների և դատարանի որոշումների հաճախակի փոփոխությունները, որոնք երբեմն անհասկանալի են, հակասական և ենթակա տարբեր մեկնաբանությունների: Հարկերը ենթակա են ստուգման և ուսումնասիրման հարկային մարմինների կողմից, որոնք իրավասու են կիրառել տույժեր և տուգանքներ: Հարկային օրենսդրության խախտման դեպքում, հարկային մարմինների կողմից չի կարող կիրառվել հավելյալ հարկերի պարտադրումներ, տույժեր և տուգանքներ, ավելի քան ստուգման նախորդող հաշվետու 3 տարիների համար:

Այս հանգամանքները Հայաստանում կարող են առաջացնել հարկային ռիսկեր, որոնք ավելի զգալի են քան այլ երկներում: Ղեկավարությունը համոզված է, որ պատշաճ կերպով կատարել է իր հարկային պարտավորությունները, հիմնվելով Հայաստանում կիրառվող հարկային օրենսդրության, պաշտոնական հայտարարությունների և դատարանի որոշումների իր մեկնաբանությունների վրա: Այնուամենայնիվ, համապատասխան մարմինների մեկնաբանությունները կարող են տարբերվել, և եթե ղեկավար մարմիններին հաջողվի հարկադրել իրենց մեկնաբանությունները, ապա այս ֆինանսական հաշվետվությունների վրա ազդեցությունը կարող է էական լինել:

Ղեկավարությունը համոզված է, որ Ընկերությունն իր գործունեությունը ծավալում է օրենսդրությամբ նախատեսված պահանջների շրջանակներում, և ամբողջությամբ կատարել է իր հարկային պարտավորությունները:

Համաձայն «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածի պահանջների, եթե երկրորդ և յուրաքանչյուր հաջորդ ֆինանսական տարվա ավարտից հետո պարզվի, որ Ընկերության զուտ ակտիվների արժեքը պակաս է օրենքով սահմանված կանոնադրական կապիտալի նվազագույն չափից:

Ընկերությունը անընդհատության սկզբունքով գործունեությունը շարունակելու համար կիրականացնի դրան ուղղված միջոցառումների ծրագիր և 2018թ. ընթացքում կապահովի օրենսդրական պահանջների համապատասխանությունը:

Ընկերությանը հատուցումների գծով ներկայացված դատական հայցերի հետ կապված ձևավորված պահուստները ներառված են Ընկերության Ներկայացված, սակայն չկարգավորված պահանջների պահուստում:

Ընկերությանը ներկայացվող մնացած դատական հայցերի առումով Ընկերության ղեկավարությունը համոզված է, որ դրանց հետևանքով առաջացող պարտավորությունները էական ազդեցություն չեն ունենա Ընկերության ֆինանսական վիճակի կամ ապագա գործառնությունների արդյունքների վրա:

Հետևաբար Ընկերության կողմից իրավական և հարկային պարտավորությունների գծով համապատասխան պահուստավորումներ չեն կատարվել:

Պարտավորություններ գործառնական վարձակալության գծով – ընկերությունը որպես վարձակալող

Ընկերությունն իր գործունեությունն ապահովելու նպատակով կնքում է առևտրային վարձակալության պայմանագրեր՝ գրասենյակային տարածք վարձակալելու նպատակով:

Գործառնական վարձակալության գծով վճարվելիք ապագա ընդհանուր նվազագույն վարձավճարների կառուցվածքը հետևյալն է.

Հազար ՀՀ դրամ	2017	2016
Մինչև 1 տարի	266,696	287,965
1-5 տարի	1,163,903	1,070,873
5 տարուց ավելի	39,175	42,817
Ընդամենը պարտավորություններ գործառնական վարձակալության գծով	1,469,774	1,401,655

Ապահովագրություն

Հայաստանում ապահովագրության ոլորտը գտնվում է զարգացման փուլում, և այլ երկրներին հատուկ բազմաթիվ ապահովագրության ձևաչափեր հիմնականում դեռևս կիրառելի չեն: Այնուամենայնիվ, 2017թ.-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերությանը սեփականության իրավունքով պատկանող փոխադրամիջոցները ապահովագրված են: Քանի դեռ Ընկերությունը չի նախատեսել ամբողջական ապահովագրություն, առկա է ռիսկ, որ որոշակի ակտիվների կորուստը կամ ոչնչացումը կարող է ունենալ բացասական ազդեցություն Ընկերության գործունեության և ֆինանսական վիճակի վրա:

Սկսած 2010թ. Ընկերությունը հանդիսանում է Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրություն իրականացնող ընկերությունների բյուրոյի անդամ (այսուհետ՝ Բյուրո): Բյուրոյի նպատակը տուժած անձանց շահերի պաշտպանությունն է և ԱՊՊԱ համակարգի կայունության և զարգացման ապահովումը: Բյուրոյին անդամակցող ապահովագրական ընկերությունները կատարում են միանվագ, պարբերական և լրացուցիչ վճարներ: Բյուրոն՝ երաշխավորման ֆոնդի միջոցների հաշվին հատուցում է տուժած անձանց պատճառված վնասները, եթե՝

1. վնաս պատճառած ավտոտրանսպորտային միջոցը կամ դրա վերաբերյալ ԱՊՊԱ պայմանագիր կնքելու պարտականություն ունեցող անձը անհայտ է (այս դեպքում հատուցվում է միայն տուժած անձանց պատճառված վնասը),
2. պատճառվել է վնաս ավտոտրանսպորտային միջոցի օգտագործմամբ, որի վերաբերյալ կնքված չէ ԱՊՊԱ պայմանագիր,
3. վնասը պատճառվել է հափշտակված կամ առանց հափշտակության նպատակի ապօրինաբար տիրացած ավտոտրանսպորտային միջոցի օգտագործմամբ,
4. վնաս պատճառված ավտոտրանսպորտային միջոցի վերաբերյալ ԱՊՊԱ պայմանագիր կնքած ապահովագրական ընկերությունը ճանաչվել է անվճարունակ, եթե նա պարտավոր էր հատուցել պատճառված վնասը, ինչպես նաև օրենքով սահմանված այլ դեպքերում:

32 Գործարքներ կապակցված կողմերի հետ

Համաձայն ՀՀՄՍ 24 «Կապակցված կողմերի բացահայտումե ստանդարտի, կողմերը համարվում են կապակցված, եթե նրանցից մեկը կարող է վերահսկել մյուսին կամ նշանակալի ազդեցություն ունենալ մյուսի վրա՝ ֆինանսական և գործառնական որոշումներ կայացնելիս: Ներկայացվող հաշվետվությունների առումով Ընկերության կապակցված կողմերն են՝ նրա բաժնետերերը, ղեկավար անձնակազմի անդամները, ինչպես նաև նրանց հետ կապակցված անձիք և նրանց կողմից վերահսկվող կազմակերպությունները:

Ընկերության վերջնական վերահսկող է հանդիսանում Սուքիասյանների ընտանիքը:

Ընկերությունն իր գործունեության ընթացքում ներգրավված է լինում կապակցված կողմերի հետ մի շարք գործարքներում: Կապակցված կողմերի հետ իրականացված գործարքների մանրամասները հետևյալն են.

Հազար ՀՀ դրամ

	2017		2016	
	Բաժնետերեր և կապակցված կողմեր	Ղեկավար անձնակազմ	Բաժնետերեր և կապակցված կողմեր	Ղեկավար անձնակազմ
<i>Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն</i>				
<i>Պահանջներ ապահովագրիչների նկատմամբ</i>				
Հաշվեկշիռ հունվարի 1-ի դրությամբ	122,360	2,939	17,285	2,609
Տարվա ընթացքում ավելացում	182,195	8,920	109,063	337
Տարվա ընթացքում նվազում	(19,548)	(1,026)	(3,988)	(7)
Հաշվեկշիռ դեկտեմբերի 31-ի դրությամբ	<u>285,007</u>	<u>10,833</u>	<u>122,360</u>	<u>2,939</u>
<i>Ապահովագրիչներին վճարվելիք գումարներ</i>				
Հաշվեկշիռ հունվարի 1-ի դրությամբ	-	-	-	-
Տարվա ընթացքում ավելացում	22,615	580	6,068	689
Տարվա ընթացքում նվազում	(22,615)	(580)	(6,068)	(689)
Հաշվեկշիռ դեկտեմբերի 31-ի դրությամբ	<u>-</u>	<u>-</u>	<u>-</u>	<u>-</u>
<i>Ավանդներ և հաշիվներ</i>				
Հաշվեկշիռ հունվարի 1-ի դրությամբ	123,314	-	266,882	-
Տարվա ընթացքում ավանդների տրամադրում/(մարում)	70,043	-	(143,568)	-
Հաշվեկշիռ դեկտեմբերի 31-ի դրությամբ	<u>193,357</u>	<u>-</u>	<u>123,314</u>	<u>-</u>
<i>Առհաշիվ տրված գումարներ</i>				
Հաշվեկշիռ հունվարի 1-ի դրությամբ	-	-	-	-
Տարվա ընթացքում ավելացում	-	32,534	-	-
Տարվա ընթացքում նվազում	-	(20,679)	-	-
Հաշվեկշիռ դեկտեմբերի 31-ի դրությամբ	<u>-</u>	<u>11,855</u>	<u>-</u>	<u>-</u>
<i>Այլ ակտիվներ</i>				
Հաշվեկշիռ հունվարի 1-ի դրությամբ	95,307	-	87,855	-
Տարվա ընթացքում ավելացում	-	-	10,537	-
Տարվա ընթացքում նվազում	-	-	(3,115)	-
Հաշվեկշիռ դեկտեմբերի 31-ի դրությամբ	<u>95,307</u>	<u>-</u>	<u>95,307</u>	<u>-</u>

Հազար ՀՀ դրամ	2017		2016	
	Բաժնետերեր և կապակցված կողմեր	Ղեկավար անձնակազմ	Բաժնետերեր և կապակցված կողմեր	Ղեկավար անձնակազմ
<i>Ֆիզիկական անձանց տրամադրած փոխառություններ</i>				
Հաշվեկշիռ հունվարի 1-ի դրությամբ	-	-	-	-
Տարվա ընթացքում ավելացում	-	4,300	-	-
Տարվա ընթացքում նվազում	-	(980)	-	-
Հաշվեկշիռ դեկտեմբերի 31-ի դրությամբ	-	3,320	-	-
<i>Վարկեր ուսուցող համաձայնագրերով</i>				
Հաշվեկշիռ հունվարի 1-ի դրությամբ	134,404	-	100,520	-
Տարվա ընթացքում ավելացում	1,619,676	-	546,822	-
Տարվա ընթացքում նվազում	(928,043)	-	(512,938)	-
Հաշվեկշիռ դեկտեմբերի 31-ի դրությամբ	826,037	-	134,404	-
<i>Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն</i>				
Համախառն ապահովագրավճարներ	182,195	8,920	109,063	337
Համախառն հատուցումներ	(22,615)	(580)	(6,068)	(689)
Ձեռքբերման ծախսեր	-	-	(10,537)	-
Այլ ծախսեր	(74,991)	-	(4,800)	-

Ղեկավար անձնակազմի գծով կատարված փոխհատուցումները հետևյալն են.

Հազար ՀՀ դրամ	2017	2016
Աշխատավարձ և պարգևատրումներ	147,450	147,361
Ընդամենը ղեկավար անձնակազմի գծով կատարված փոխհատուցումներ	147,450	147,361

33 Իրական արժեքի չափումը

Ընկերության ղեկավարությունը սահմանում է իրական արժեքի պարբերաբար չափման քաղաքականությունն ու ընթացակարգերը չգնանշվող վաճառքի համար մատչելի արժեթղթերի և շենքերի համար:

Անկախ գնահատողները ներգրավվում են նշանակալի ակտիվների գնահատման մեջ, ինչպես օրինակ անշարժ գույքը, Անկախ գնահատողների ընդգրկումը յուրաքանչյուր տարի որոշվում է Ընկերության ղեկավարության կողմից:

Յուրաքանչյուր հաշվետու ամսաթվին Ընկերության ղեկավարությունը վերլուծում է ակտիվների և պարտավորությունների արժեքների փոփոխությունները, որոնք պետք է վերագնահատվեն համաձայն Ընկերության հաշվապահական հաշվառման քաղաքականության: Այս վերլուծությունների համար ճշտվում են հիմնական տվյալները, որոնք կիրառվել են նախորդ գնահատման ժամանակ, համադրելով գնահատման հաշվարկի տեղեկատվությունը պայմանագրերի և այլ համապատասխան փաստաթղթերի հետ: Ընկերությունն անկախ գնահատողների հետ միասին համեմատում է յուրաքանչյուր ակտիվի և պարտավորության իրական արժեքի յուրաքանչյուր փոփոխությունը համապատասխան արտաքին աղբյուրների հետ, որոշելու համար, թե հիմնավորված է արդյոք տվյալ փոփոխությունը:

Ֆինանսական և ոչ ֆինանսական ակտիվներն ու պարտավորությունները ներկայացվում են համաձայն իրական արժեքի հիերարխիայի: Այս հիերարխիան բաժանում է ֆինանսական և ոչ ֆինանսական ակտիվներն ու պարտավորությունները երեք մակարդակների՝ հիմք ընդունելով դրանց իրական արժեքի չափման ժամանակ օգտագործված գործիքների նշանակալիությունը: Իրական արժեքի հիերարխիան ունի հետևյալ երեք մակարդակները՝

Մակարդակ 1 - նույն ակտիվների և պարտավորությունների գծով ակտիվ շուկաներում գնանշվող գները (չճշգրտված)։

Մակարդակ 2- Մակարդակ 1-ում ներառված գնանշվող գներից տարբեր այլ ելակետային տվյալներ, որոնք ակտիվի և պարտավորության համար դիտարկելի են ուղղակիորեն (այսինքն՝ որպես գներ) և թե՞ անուղղակիորեն (այսինքն՝ գների հիման վրա ստացվող): Մակարդակ 3 - ակտիվի կամ պարտավորության գծով ելակետային տվյալներ, որոնք հիմնված չեն դիտարկվող շուկայական տվյալների վրա (ոչ դիտարկելի ելակետային տվյալներ):

33.1 Իրական արժեքով չչափվող ֆինանսական գործիքներ

Ստորև բերված աղյուսակը ներկայացնում է ֆինանսական ակտիվների և պարտավորությունների իրական արժեքը, որոնք ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում չեն չափվել իրենց իրական արժեքով և ըստ մակարդակի վերլուծում է դրանք իրական արժեքի հիերարխիայում, թե իրական արժեքի չափումը որ դասում է դասակարգված:

Հազար ՀՀ դրամ

2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ

				Ընդամենը	
	Մակարդակ 1	Մակարդակ 2	Մակարդակ 3	իրական արժեք	հաշվեկշռային արժեք
<i>ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐ</i>					
Ապահովագրության գծով դեբիտորական պարտքեր	-	420,007	-	420,007	420,007
Վերապահովագրական ակտիվներ	-	11,723	-	11,723	11,723
Ֆիզիկական անձանց տրամադրած փոխառություններ	-	8,632	-	8,632	8,632
Ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ պահանջներ	-	2,189,413	-	2,189,413	2,189,413
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	-	60,324	-	60,324	60,324

Հազար ՀՀ դրամ

2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ

	Մակարդակ 1	Մակարդակ 2	Մակարդակ 3	Ընդամենը իրական արժեք	Ընդամենը հաշվեկշռային արժեք
<i>ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ</i>					
Ապահովագրական պարտավորություններ	-	212,173	-	212,173	212,173
Ապահովագրության գծով կրեդիտորական պարտքեր	-	100,876	-	100,876	100,876
Բանկերից ստացված վարկեր	-	100,656	-	100,656	100,656
Վարկեր ռեպո համաձայնագրերով	-	725,383	-	725,383	725,383
Ստորադաս փոխառություն	-	295,048	-	295,048	295,048
Այլ պարտավորություններ	-	70,936	-	70,936	70,936

Չվաստակաժ ապահովագրավճարները և չվաստակաժ ապահովագրավճարներում վերաապահովագրողների մասը բացառվել է վերլուծությունից, քանի որ վերջիններս չեն համարվում պայմանագրային պարտավորություններ:

Հազար ՀՀ դրամ

2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ

	Մակարդակ 1	Մակարդակ 2	Մակարդակ 3	Ընդամենը իրական արժեք	Ընդամենը հաշվեկշռային արժեք
<i>ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐ</i>					
Ապահովագրության գծով դեբիտորական պարտքեր	-	663,384	-	663,384	663,384
Վերաապահովագրական ակտիվներ	-	13,565	-	13,565	13,565
Ֆիզիկական անձանց տրամադրած փոխառություններ	-	9,934	-	9,934	9,934
Ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ պահանջներ	-	1,846,083	-	1,846,083	1,846,083
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	-	15,215	-	15,215	15,215
<i>ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒ ԹՅՈՒՆՆԵՐ</i>					
Ապահովագրական պարտավորություններ	-	351,821	-	351,821	351,821
Ապահովագրության գծով կրեդիտորական պարտքեր	-	104,789	-	104,789	104,789
Վարկեր ռեպո համաձայնագրերով	-	134,405	-	134,405	134,405
Այլ պարտավորություններ	-	69,883	-	69,883	69,883

Ակտիվներ, որոնց իրական արժեքը մոտավորապես հավասար է հաշվեկշռային արժեքին

Կարճաժամկետ ֆինանսական ակտիվների և պարտավորությունների համար (մինչև երեք ամիս) ենթադրվում է, որ, հաշվեկշռային արժեքը մոտավոր արտացոլում է իրական արժեքը: Այս ենթադրությունը կիրառելի է նաև որոշակի մարման ժամկետ չունեցող ցպահանջ ավանդների, բանկային հաշիվների համար:

Ֆիքսված տոկոսադրույքով ֆինանսական գործիքներ

Ֆիքսված տոկոսադրույքներով և ամորտիզացված արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվների ու պարտավորությունների իրական արժեքը որոշվում է նրանց ճանաչման պահին գործող շուկայական տոկոսադրույքները համեմատելով նմանատիպ ֆինանսական գործիքների ընթացիկ շուկայական տոկոսադրույքների հետ: Ֆիքսված տոկոսադրույքներով ավանդների գնահատված իրական արժեքը հիմնված է դրամական հոսքերի վրա՝ զեղչված համանման պարտքային ռիսկ և ժամկետ ունեցող գործիքների տոկոսադրույքներով: Հաշվետու ամսաթվի դրությամբ այդ գործիքների իրական արժեքը չէր տարբերվում հաշվեկշռային արժեքից:

33.2 Իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքներ

Հազար ՀՀ դրամ	2017			
	Մակարդակ 1	Մակարդակ 2	Մակարդակ 3	Ընդամենը
ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐ				
Չցուցակված պարտատոմսեր (Ծանոթ. 13, 21)	-	773,657	-	773,657
Ընդամենը	-	773,657	-	773,657

Հազար ՀՀ դրամ	2016			
	Մակարդակ 1	Մակարդակ 2	Մակարդակ 3	Ընդամենը
ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐ				
Չցուցակված պարտատոմսեր (Ծանոթ. 13, 21)	-	148,778	-	148,778
Ընդամենը	-	148,778	-	148,778

Իրական արժեքի չափման մեթոդները և գնահատման մեխանիզմը չեն փոփոխվել նախորդ հաշվետու ժամանակաշրջանի համեմատությամբ:

Չգնանշվող սեփական կապիտալի ներդրումներ

Ընկերության ներդրումների իրական արժեքը "Երևանի Ալրադաջ" ԲԲԸ չցուցակված սեփական կապիտալի ներդրումներում չի կարող չափվել և հետևաբար դուրս է մնում այս բացահայտումից (Ծանոթ. 13):

33.3 Ոչ ֆինանսական ակտիվների և պարտավորությունների իրական արժեքի չափումը

Հազար ՀՀ դրամ

2017

	Մակարդակ 1	Մակարդակ 2	Մակարդակ 3	Ընդամենը
ՈՂ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐ				
<i>Հիմնական միջոցներ</i>				
Շենքեր	-	-	437,266	437,266
Համակարգչային տեխնիկա և կապի միջոցներ	-	-	99,079	99,079
Գրասենյակային սարքավորումներ	-	-	43,455	43,455
Այլ հիմնական միջոցներ	-	-	75,040	75,040
Ընդամենը	-	-	654,840	654,840

Հազար ՀՀ դրամ

2016

	Մակարդակ 1	Մակարդակ 2	Մակարդակ 3	Ընդամենը
ՈՂ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐ				
<i>Հիմնական միջոցներ</i>				
Շենքեր	-	-	433,473	433,473
Համակարգչային տեխնիկա և կապի միջոցներ	-	-	86,349	86,349
Գրասենյակային սարքավորումներ	-	-	37,851	37,851
Այլ հիմնական միջոցներ	-	-	70,798	70,798
Ընդամենը	-	-	628,471	628,471

Իրական արժեքի չափումը Մակարդակ 3-րդում

3-րդ մակարդակում դասակարգված Ընկերության ոչ ֆինանսական ակտիվների և պարտավորությունների գնահատման մեխանիզմների օգտագործումը հիմնված է այն ելակետային տվյալների վրա, որոնք հիմնված չեն դիտարկվող շուկայի տվյալների վրա:

Այս մակարդակում ոչ ֆինանսական ակտիվների տարեկան շարժը հետևյալն է.

Հազար ՀՀ դրամ

2017

	Հիմնական միջոցներ	Ընդամենը
ՈՂ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐ		
2017թ. հունվարի 1-ի դրությամբ	628,471	628,471
Ավելացում	26,369	26,369
2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	654,840	654,840

	Հիմնական միջոցներ	Ընդամենը
ՈՁ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐ		
2016թ. հունվարի 1-ի դրությամբ	622,943	622,943
Նվազում	(114)	(114)
Այլ համապարփակ եկամուտում ճանաչված օգուտ	5,642	5,642
2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	628,471	628,471

Ընկերության հիմնական գույքային ակտիվների իրական արժեքը հաշվարկվում է գնահատումների հիման վրա՝ իրականացված անկախ, մասնագիտորեն որակավորված գույքի գնահատողների կողմից: Նշանակալի ելակետային տվյալները և ենթադրությունները մշակվում են համաձայն ղեկավարության հետ սերտ խորհրդակցության: Գնահատման գործընթացները և իրական արժեքի փոփոխությունները վերանայվում են խորհրդի կողմից յուրաքանչյուր հաշվետու ամսաթվին:

Ընկերության շենքի վերջին վերագնահատումը կատարվել է 2010թ. հունվարի 21-ին անկախ գնահատողների կողմից՝ կիրառելով համեմատական, ծախսային և եկամտային մեթոդները: Իրական արժեքով շենքի գնահատման համար Ղեկավարությունը հիմք է ընդունում անկախ գնահատողների կողմից ներկայացված արդյունքները:

Ընկերության այլ դասերի հիմնական միջոցների վերագնահատումը կատարվել է 2016թ. հոկտեմբերի 31-ին անկախ գնահատողների կողմից՝ կիրառելով համեմատական, ծախսային և եկամտային մեթոդները: Իրական արժեքով գնահատման համար Ղեկավարությունը հիմք է ընդունում անկախ գնահատողների կողմից ներկայացված արդյունքները:

34 Ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների հաշվանցում

Իր գործունեության ընթացքում Ընկերությունը ֆինանսական գործիքների հետ իրականացնում է տարբեր գործառնություններ, որոնք կարող են ներկայացվել զուտ արժեքով, եթե գոյություն ունի օրենսդրորեն հաստատված իրավունք իրականացնելու հաշվանցված գումարների հաշվանցում, ինչպես նաև մտադրություն իրականացնելու հաշվանցում կամ միաժամանակ իրացնելու ակտիվը և մարելու պարտավորությունը:

Ստորև բերված աղյուսակը ներկայացնում է ֆինանսական ակտիվներն ու ֆինանսական պարտավորությունները, որոնք ենթակա են հաշվանցման համաձայն հաշվանցման գլխավոր համաձայնագրի կամ համանման պայմանագրերի, որը ներառում է նմանատիպ ֆինանսական գործիքները, անկախ այն բանից, դրանք հաշվանցվել են ֆինանսական վիճակի մասին հաշվետուության մեջ թե ոչ:

Հազար ՀՀ դրամ

2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ

	Ճանաչված Ֆինանսական ակտիվների/ Պարտավորու- թյունների համախառն գումար՝ հաշվանցված Ֆինանսական վիճակի մասին հաշվետվությո- ւնում	Ֆինանսական պարտավորու- թյունների զուտ գումար՝ ներկայացված Ֆինանսական վիճակի մասին հաշվետվությո- ւնում	Կապակցված գումարներ, որոնք չեն հաշվանցվել ֆինանսական վիճակի մասին հաշվետվության մեջ		Զուտ
			Ֆինանսակա ն գործիքներ	Ստացված դրամական ապահովում	
ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ					
Վարկեր ու պարտավորություններ (ծանոթ. 21)	725,383	-	725,383	(768,421)	-
					(43,038)

Հազար ՀՀ դրամ

2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ

	Ճանաչված Ֆինանսական ակտիվների/ պարտավորու- թյունների համախառն գումար՝ հաշվանցված Ֆինանսական վիճակի մասին հաշվետվությո- ւնում	Ֆինանսական պարտավորու- թյունների զուտ գումար՝ ներկայացված Ֆինանսական վիճակի մասին հաշվետվությո- ւնում	Կապակցված գումարներ, որոնք չեն հաշվանցվել ֆինանսական վիճակի մասին հաշվետվության մեջ		Զուտ
			Ֆինանսակա ն գործիքներ	Ստացված դրամական ապահովում	
ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ					
Վարկեր ու պարտավորություններ (ծանոթ. 21)	134,405	-	134,405	(141,596)	-
					(7,191)

35 Ակտիվների և պարտավորությունների ժամկետային վերլուծություն

Հետևյալ աղյուսակը ներկայացնում է հիմնական ֆինանսական ակտիվները և պարտավորություններն ըստ սպասվելիք մարման ժամկետների: Ընկերության չզեղչված պայմանագրային պարտավորությունների մասին տեղեկատվությունը ներկայացված է ծանոթագրություն 36.6-ում: Ապահովագրության պայմանագրերի գծով պարտավորությունների և վերաապահովագրական ակտիվների համար, ժամկետայնությունը որոշվում է՝ ելնելով ճանաչված ապահովագրության գծով պարտավորություններից գնահատված դրամական արտահոսքի ժամկետներից: Չվաստակաճ ապահովագրավճարները և չվաստակաճ

ապահովագրավճարներում վերաապահովագրողների մասը բացառվել է վերլուծությունից, քանի որ վերջիններս չեն համարվում պայմանագրային պարտավորություններ:

Հազար ՀՀ դրամ

2017

	Ցպահանջ և մինչև 1 ամիս	1-ից 3 ամիս	3-ից 12 ամիս	Մինչև 12 ամիս, ենթահանրագումար	1 տարուց ավելի	Ընդամենը
ԱԿՏԻՎՆԵՐ						
Ապահովագրության գծով կրեդիտորական պարտքեր	109,569	19,251	290,517	419,337	670	420,007
Վերաապահովագրական ակտիվներ	-	-	11,723	11,723	-	11,723
Ֆիզիկական անձանց տրամադրած փոխառություններ	40	600	5,000	5,640	2,992	8,632
Պահանջներ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	-	-	2,189,413	2,189,413	-	2,189,413
Հետզնման պայմանագրերով գրավադրված արժեթղթեր	768,421	-	-	768,421	-	768,421
Վաճառքի համար մատչելի ներդրումներ	-	-	75	75	40,161	40,236
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	60,324	-	-	60,324	-	60,324
	<u>938,354</u>	<u>19,851</u>	<u>2,496,728</u>	<u>3,454,933</u>	<u>43,823</u>	<u>3,498,756</u>
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ						
Ապահովագրական պարտավորություններ	-	-	212,173	212,173	-	212,173
Ապահովագրության գծով կրեդիտորական պարտքեր	77,193	23,683	-	100,876	-	100,876
Բանկերից ստացված վարկեր	656	100,000	-	100,656	-	100,656
Վարկեր ռեպո համաձայնագրերով	725,383	-	-	725,383	-	725,383
Ստորադաս փոխառություն	1,391	-	-	1,391	293,657	295,048
Այլ պարտավորություններ	25,756	-	45,180	70,936	-	70,936
	<u>830,379</u>	<u>123,683</u>	<u>257,353</u>	<u>1,211,415</u>	<u>293,657</u>	<u>1,505,072</u>
Զուտ դիրք	<u>107,975</u>	<u>(103,832)</u>	<u>2,239,375</u>	<u>2,243,518</u>	<u>(249,835)</u>	<u>1,993,684</u>
Կուտակված ճեղքվածք	<u>107,975</u>	<u>4,143</u>	<u>2,243,518</u>		<u>1,993,684</u>	

	Ցպահանջ և մինչև 1 ամիս	1-ից 3 ամիս	3-ից 12 ամիս	Մինչև 12 ամիս, ենթահանրագումար	1 տարուց ավելի	Ընդամենը
ԱԿՏԻՎՆԵՐ						
Ապահովագրության գծով դեբիտորական պարտքեր	51,916	54,326	537,248	643,490	19,894	663,384
Վերաապահովագրական ակտիվներ	-	-	13,565	13,565	-	13,565
Ֆիզիկական անձանց տրամադրած փոխառություններ	-	1,285	160	1,445	8,489	9,934
Պահանջներ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	-	292,821	1,553,262	1,846,083	-	1,846,083
Հետզնման պայմանագրերով գրավադրված արժեթղթեր	141,596	-	-	141,596	-	141,596
Վաճառքի համար մատչելի ներդրումներ	-	-	120	120	42,062	42,182
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	15,215	-	-	15,215	-	15,215
	<u>208,727</u>	<u>348,432</u>	<u>2,104,355</u>	<u>2,661,514</u>	<u>70,445</u>	<u>2,731,959</u>
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ						
Ապահովագրական պարտավորություններ	-	-	351,821	351,821	-	351,821
Ապահովագրության գծով կրեդիտորական պարտքեր	55,462	22,953	-	78,415	26,374	104,789
Վարկեր ռեպո համաձայնագրերով	134,405	-	-	134,405	-	134,405
Այլ պարտավորություններ	26,875	-	43,008	69,883	-	69,883
	<u>216,742</u>	<u>22,953</u>	<u>394,829</u>	<u>634,524</u>	<u>26,374</u>	<u>660,898</u>
Զուտ դիրք	<u>(8,015)</u>	<u>325,479</u>	<u>1,709,526</u>	<u>2,026,990</u>	<u>44,701</u>	<u>2,071,061</u>
Կուտակված ճեղքվածք	<u>(8,015)</u>	<u>317,464</u>	<u>2,026,990</u>		<u>2,071,061</u>	

36 Ապահովագրական և ֆինանսական ռիսկի կառավարում

Ընկերության գործունեությանը բնորոշ է ռիսկերի բազմազանությունը և այդ գործունեությունը ենթադրում է ռիսկերի որոշակի աստիճանի և համադրությունների վերլուծություն, գնահատում, ընդունում և կառավարում: Ռիսկի կրումը ֆինանսական գործունեության անբաժանելի մասն է, և գործառնական ռիսկերը գործունեության անխուսափելի հետևանքն են: Այդուհանդերձ, Ընկերության նպատակն է հասնել ռիսկերի և օգուտների միջև համապատասխան հավասարակշռության և նվազագույնի հասցնել Ընկերության ֆինանսական վիճակի վրա անցանկալի ազդեցությունները: Կարևորագույն ռիսկերն են ապահովագրական և ֆինանսական ռիսկերը: Վերջինս ներառում է պարտքային ռիսկը, իրացվելիության ռիսկը, շուկայական ռիսկը:

36.1 Ապահովագրական ռիսկ

Ապահովագրության պայմանագրերի գծով Ընկերության հիմնական ռիսկն այն է, որ փաստացի պահանջները և հատուցումները կամ դրանց հետ կապված ժամկետները տարբերվեն սպասված

արդյունքներից: Վերոհիշյալը կապված է պահանջների հաճախականության, դրանց խստության մակարդակի, փաստացի վճարված հատուցումների և երկարաժամկետ պահանջների հետագա զարգացման հետ: Այդ պատճառով, Ընկերության նպատակն է ապահովել բավարար պահուստներ այդ պարտավորությունները ծածկելու համար: Վերը նշված ռիսկի մակարդակը զսպվում է՝ բազմազանեցնելով ապահովագրության պայմանագրերի լայն պորտֆելը: Ռիսկերի փոփոխականությունը նվազեցվում է նաև անդերոայթինգի քաղաքականության պատշաճ ընտրության և իրականացման միջոցով, ինչպես նաև վերաապահովագրության պայմանագրերի կիրառմամբ:

Ռիսկերի զսպման քաղաքականության շրջանակներում Ընկերությունը իրականացնում է ինչպես ֆակուլտատիվ, այնպես էլ օբլիգատոր վերաապահովագրություն:

Վերաապահովագրությունը իրականացվում է համամասնական սկզբունքով: Համամասնական վերաապահովագրության հիմնական մասը կազմում է քվոտային վերաապահովագրությունը, որն իրականացվում է Ընկերության գործունեության որոշ դասերի գծով ռիսկի ընդհանուր ենթարկվածությունը նվազեցնելու նպատակով:

Վերաապահովագրողներից վերականգնվող գումարները գնահատվում են ըստ չկարգավորված պահանջների պահուստի և համապատասխանում են վերաապահովագրության պայմանագրերին: Չնայած նրան, որ Ընկերությունն ունի վերաապահովագրության պայմանագրեր, այն չի ազատվում ապահովադիրների նկատմամբ ուղղակի պարտավորություններից և հետևաբար փոխանցված ապահովագրության հետ կապված գոյություն ունի նաև պարտքային ռիսկ, կապված վերաապահովագրողի կողմից վերաապահովագրության պայմանագրերով ստանձնած պարտականությունների չկատարման հետ: Ընկերության կողմից վերաապահովագրության ձեռքբերումը այնպես է բազմազանեցված, որպեսզի Ընկերությունը կախված չլինի մեկ վերաապահովագրողից, իսկ Ընկերության գործառնությունները կախված չլինին նաև վերաապահովագրության մեկ պայմանագրից:

36.1.1 Ապահովագրության պայմանագրեր

Ընկերությունը հիմնականում կնքում է հետևյալ դասերի ընդհանուր ապահովագրության պայմանագրեր՝ ավտոտրանսպորտային միջոցների (ներառյալ ուղևորներին պատճառված վնասների և երրորդ անձանց նկատմամբ պատասխանատվության), առողջության, գույքի, ընդհանուր պատասխանատվության, բեռների, դժբախտ պատահարների ապահովագրության, ինչպես նաև ԱՊՊԱ: Ընդհանուր ապահովագրության պայմանագրերը հիմնականում ընդգրկում են 12 ամսյա ժամկետ:

Բացի արդեն նշված ռիսկերի զսպման վերոնշյալ քաղաքականությունից, ռիսկին ենթարկվածությունը նվազեցնելու համար Ընկերությունը կիրառում է նաև պահանջների մանրամասն ուսումնասիրման քաղաքականություն, գնահատելու համար բոլոր նոր և գործող պահանջները, պարբերաբար դիտարկում է պահանջների կարգավորման ընթացակարգերը և հաճախ ուսումնասիրություններ է իրականացնում բացահայտելու համար հնարավոր կեղծ հայտերը: Բացի այդ, Ընկերությունը կիրառում է պահանջների ակտիվ կառավարման և արագ կարգավորման քաղաքականություն, նվազեցնելու համար ապագա անկանխատեսելի զարգացումների հնարավոր բացասական ազդեցությունը Ընկերության վրա: Գնաճի ռիսկը զսպվում է ապահովագրության պայմանագրերի գծով պարտավորությունները գնահատելիս գնաճը հաշվի առնելով:

Անդերոայթինգի և վերաապահովագրության ռազմավարությունների օգտագործման նպատակն է նվազեցնել Ընկերության ենթարկվածությունը ռիսկից՝ հիմնվելով Ընկերության ղեկավարության կողմից որոշված ռիսկի ընդունելի չափերի վրա: Սրա հիմնական նպատակն է հանդիսանում մեկ դեպքի ազդեցությունը սահմանափակել բաժնետիրական կապիտալի 10%-ի չափով՝ հաշվի առնելով վերաապահովագրությունը: Խորհուրդը կարող է ավելացնել կամ նվազեցնել ընդունելի սահմանաչափերը՝ կախված շուկայական պայմաններից և այլ գործոններից:

Ստորև ներակայացված է ապահովագրական պարտավորությունների կենտրոնացվածությունը՝ ըստ ապահովագրության դասերի.

Հազար ՀՀ դրամ

	2017			2016		
	Ապահովագրական պարտավորություններ	Վերապահովագրական ակտիվներ	Զուտ պարտավորություններ	Ապահովագրական պարտավորություններ	Վերապահովագրական ակտիվներ	Զուտ պարտավորություններ
Դժբախտ պատահարներից ապահովագրություն	17,114	(7,819)	9,295	11,230	(5,245)	5,985
Առողջության ապահովագրություն	343,595	(958)	342,637	393,938	-	393,938
Ցամաքային տրանսպորտի ապահովագրություն	113,094	(42,939)	70,155	148,728	(43,909)	104,819
Փոխադրվող գույքի (բեռների) ապահովագրություն	12,024	(7,289)	4,735	13,298	(8,064)	5,234
Հրդեհից և բնական աղետներից ապահովագրություն	82,329	(24,082)	58,247	79,745	(22,512)	57,233
Ցամաքային ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության կամավոր ապահովագրություն	2,445	(764)	1,681	2,275	(830)	1,445
Ընդհանուր պատասխանատվության ապահովագրություն	29,225	(7,924)	21,301	61,866	(37,489)	24,377
Ֆինանսական վնասների ապահովագրություն	30,339	(20,915)	9,424	13,833	(9,088)	4,745
Աջակցության ապահովագրություն	6,961	-	6,961	1,859	-	1,859
Ցամաքային ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրություն	930,935	-	930,935	1,014,980	-	1,014,980
Դեկտեմբերի 31-ի դրությամբ	1,568,061	(112,690)	1,455,371	1,741,752	(127,137)	1,614,615

Ընկերությունը սահմանում է առավելագույն սահմանաչափեր, որոնք նա պատրաստ է ընդունել ապահովագրության պայմանագրերից բխող ռիսկի կենտրոնացումների գծով: Բացի այդ, Ընկերությունը հետևում է այդ սահմանաչափերին ռիսկերի գնահատման և ընդունման (անդերոայթինգ) ժամանակ:

Առավելագույն կորուստը, վերապահովագրությունից հետո, որ Ընկերությունն ընդունում է յուրաքանչյուր պայմանագրի գծով, ընդհանուր կապիտալի 10%-ն է կազմում, համաձայն ՀՀ կենտրոնական բանկի կանոնակարգերի:

Հիմնական ենթադրություններ

Ընկերության պարտավորությունների գնահատման հիմքում ընկած հիմնական ենթադրությունը այն է, թե արդյո՞ք Ընկերության ապագա պահանջների զարգացումը նման կլինի անցյալ պահանջների զարգացումների փորձին: Դրանք ներառում են ենթադրություններ, կապված պահանջների գծով միջին ծախսի, պահանջների կարգավորման ծախսերի, սպասվող վնասաբերության ցուցանիշների և յուրաքանչյուր տարում դժբախտ պատահարների գծով պահանջների քանակի հետ: Օգտագործվում են լրացուցիչ որակական դատողություններ՝ գնահատելու համար, թե որ տենդենցները կիրառելի չեն ապագայի համար, օրինակ՝ հատուկենտ դեպքեր, փոփոխություններ շուկայական պայմաններում, ինչպես օրինակ՝

հանրության վերաբերմունքի փոփոխությունը պահանջների ներկայացման հանդեպ, տնտեսական իրավիճակի փոփոխությունը, ինչպես նաև ներքին գործոններ, ինչպիսիք են պորտֆելի կառուցվածքը, պոլիսների պայմանները, պահանջների կարգավորման ընթացակարգերը:

Հետագա դատողությունները օգտագործվում են որոշելու համար, թե որքանով կարող են արտաքին գործոնները, ինչպիսիք են դատական վճիռները, օրենսդրական դաշտը, ազդել գնահատումների վրա:

Ենթադրությունների վստահելիության վրա ազդող այլ կարևոր հանգամանքները ներառում են տոկոսադրույքները, վճարման ժամկետների երկարաձգումները և փոփոխությունները արտարժույթի փոխարժեքներում:

Այնուամենայնիվ, կապված ՀՀ-ում համեմատաբար նոր ապահովագրական շուկայի հետ, դժվար է կանխատեսել որևէ պահանջի հավանական արդյունքը և ներկայացված պահանջների վերջնական արժեքը: Վնասի վերջնական արժեքի վրա ազդող գործոններից շատերի ազդեցությունը դժվար է որոշել: Այդ պատճառով, Ընկերության ղեկավարությունը պարբերաբար վերանայում է վիճակագրական տվյալները, շուկայական փոփոխությունները և այլ գործոններ, պահուստների ավելի զգուշավոր գնահատման համար:

Զգայունության վերլուծություն

Ապահովագրական պահանջների պահուստները զգայուն են վերոնշյալ հիմնական ենթադրությունների նկատմամբ: Որոշ ենթադրությունների համար հնարավոր չի եղել որոշել քանակական զգայունությունը, ինչպիսիք են օրենսդրական փոփոխությունները կամ գնահատման գործընթացում անորոշությունները: Ստորև ներկայացված վերլուծությունը իրականացված է հիմնական ենթադրություններում հնարավոր փոփոխությունների համար, այլ ենթադրությունները անփոփոխ լինելու պայմաններում, և ցույց է տալիս ազդեցությունը մինչև հարկումը շահույթի վրա: Ենթադրությունների փոխակապակցվածությունը զգալի ազդեցություն ունի պահանջների գծով պարտավորությունների վերջնական արժեքը որոշելու վրա, բայց ենթադրությունների փոփոխությունների ազդեցությունը ցույց տալու համար, ենթադրությունները փոփոխվում են անհատական հիմքով: Պետք է նշել, որ այս ենթադրությունների փոփոխությունները գծային չեն:

Հազար ՀՀ դրամ

2017

	Փոփոխություն ենթադրություններում, %	Ազդեցությունը շահույթի վրա մինչև հարկումը	
		Համախառն վերաապահովագրությունից	Զուտ վերաապահովագրությունից
Պահանջի միջին արժեք	+10	(229,316)	(221,783)
Սպասվող վնասաբերության ցուցանիշ	+10	(142,215)	(126,308)

Հազար ՀՀ դրամ

2016

	Փոփոխություն ենթադրություններում, %	Ազդեցությունը շահույթի վրա մինչև հարկումը	
		Համախառն վերաապահովագրությունից	Զուտ վերաապահովագրությունից
Պահանջի միջին արժեք	+10	(191,576)	(183,522)
Սպասվող վնասաբերության ցուցանիշ	+10	(180,495)	(160,861)

Պահանջների զարգացման աղյուսակ

Ստորև ներկայացված աղյուսակը ցույց է տալիս գնահատված կուտակային պահանջները, ներառյալ ներկայացված պահանջները և տեղի ունեցած, բայց չներկայացված պահանջները դեպքի յուրաքանչյուր հաջորդ տարվա համար, հաշվետու ամսաթվի դրությամբ, ինչպես նաև կուտակային վճարումները: Համախառն ապահովագրական պարտավորությունները 2017թ. համար զարգացել են հետևյալ կերպ.

Հազար ՀՀ դրամ	2011	2012	2013	2014	2015	2016	2017	Ընդամենը
<i>Կուտակային պահանջների ընթացիկ գնահատական</i>								
Դեպքի յուրաքանչյուր տարվա վերջում	350,211	629,462	1,040,400	1,289,637	1,327,671	1,886,054	2,029,177	8,552,612
Մեկ տարի անց	419,217	766,462	1,381,286	1,682,925	1,771,275	2,058,953	-	8,080,118
Երկու տարի անց	426,091	778,566	1,402,991	1,694,421	1,784,857	-	-	6,086,926
Երեք տարի անց	432,152	787,852	1,405,044	1,703,678	-	-	-	4,328,726
Չորս տարի անց	435,065	787,997	1,406,000	-	-	-	-	2,629,062
Հինգ տարի անց	435,294	788,107	-	-	-	-	-	1,223,401
Վեց տարի անց	436,243	-	-	-	-	-	-	436,243
Կուտակային պահանջների ընթացիկ գնահատական	436,243	788,107	1,406,000	1,703,678	1,784,857	2,058,953	2,029,177	10,207,015
<i>Կուտակային վճարներ հաշվետու ամսաթվի դրությամբ</i>								
Դեպքի յուրաքանչյուր տարվա վերջում	(350,211)	(629,462)	(1,040,400)	(1,289,637)	(1,327,671)	(1,551,918)	(1,827,535)	(8,016,834)
Մեկ տարի անց	(419,217)	(766,462)	(1,381,286)	(1,682,925)	(1,771,275)	(2,052,877)	-	(8,074,042)
Երկու տարի անց	(426,091)	(778,566)	(1,402,991)	(1,694,421)	(1,783,642)	-	-	(6,085,711)
Երեք տարի անց	(432,152)	(787,852)	(1,405,044)	(1,702,181)	-	-	-	(4,327,229)
Չորս տարի անց	(435,065)	(787,997)	(1,405,044)	-	-	-	-	(2,628,106)
Հինգ տարի անց	(435,294)	(787,997)	-	-	-	-	-	(1,223,291)
Վեց տարի անց	(435,566)	-	-	-	-	-	-	(435,566)
Կուտակային վճարներ հաշվետու ամսաթվի դրությամբ	(435,566)	(787,997)	(1,405,044)	(1,702,181)	(1,783,642)	(2,052,877)	(1,827,535)	(9,994,842)
Ընդամենը համախառն ապահովագրական պարտավորություններ ըստ հաշվեկշռի	677	110	956	1,497	1,215	6,076	201,642	212,173

Զուտ ապահովագրական պարտավորությունները 2017թ. համար հետևյալն են.

Հազար ՀՀ դրամ	2011	2012	2013	2014	2015	2016	2017	Ընդամենը
<i>Կուրակային պահանջների ընթացիկ գնահատական</i>								
Դեպքի յուրաքանչյուր տարվա վերջում	307,133	551,729	1,100,555	1,209,427	1,275,878	1,807,037	1,958,481	8,210,240
Մեկ տարի անց	368,002	573,218	1,381,736	1,589,567	1,707,131	1,975,580	-	7,595,234
Երկու տարի անց	369,565	584,404	1,391,412	1,600,078	1,720,578	-	-	5,666,037
Երեք տարի անց	375,626	592,460	1,393,465	1,609,294	-	-	-	3,970,845
Չորս տարի անց	378,023	592,504	1,394,386	-	-	-	-	2,364,913
Հինգ տարի անց	378,252	592,536	-	-	-	-	-	970,788
Վեց տարի անց	379,201	-	-	-	-	-	-	379,201
Կուտակային պահանջների ընթացիկ գնահատական	379,201	592,536	1,394,386	1,609,294	1,720,578	1,975,580	1,958,481	9,630,056
<i>Կուրակային վճարներ հաշվետու ամսաթվի դրությամբ</i>								
Դեպքի յուրաքանչյուր տարվա վերջում	(307,133)	(551,729)	(1,100,555)	(1,209,427)	(1,275,878)	(1,484,612)	(1,768,264)	(7,697,598)
Մեկ տարի անց	(368,002)	(573,218)	(1,381,736)	(1,589,567)	(1,707,131)	(1,969,504)	-	(7,589,158)
Երկու տարի անց	(369,565)	(584,404)	(1,391,412)	(1,600,078)	(1,719,498)	-	-	(5,664,957)
Երեք տարի անց	(375,626)	(592,460)	(1,393,465)	(1,607,839)	-	-	-	(3,969,390)
Չորս տարի անց	(378,023)	(592,504)	(1,393,465)	-	-	-	-	(2,363,992)
Հինգ տարի անց	(378,252)	(592,504)	-	-	-	-	-	(970,756)
Վեց տարի անց	(378,524)	-	-	-	-	-	-	(378,524)
Կուտակային վճարներ հաշվետու ամսաթվի դրությամբ	(378,524)	(592,504)	(1,393,465)	(1,607,839)	(1,719,498)	(1,969,504)	(1,768,264)	(9,429,518)
Ընդամենը համախառն ապահովագրական պարտավորություններ ըստ հաշվեկշռի	677	33	921	1,455	1,080	6,076	190,217	200,450

36.2 Պարտքային ռիսկ

Ընկերության գործունեությունը ենթարկվում է պարտքային ռիսկի: Հիմնական ոլորտները, որտեղ Ընկերության գործունեությունը ենթարկվում է պարտքային ռիսկի, հետևյալն են՝

- Պարտքային արժեթղթեր և բանկային հաշիվներ,
- Ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ պահանջներ,
- Ապահովագրության գծով պարտավորություններում վերաապահովագրողի մաս,

- Վերաապահովագրողների նկատմամբ պահանջներ արդեն վճարված պահանջների գծով,
- Ապահովադիրների նկատմամբ պահանջներ,
- Ապահովագրության միջնորդների նկատմամբ պահանջներ:

Պարտքային ռիսկի հետագա բացահայտումներում չվաստակած ապահովագրավճարների պահուստում վերաապահովագրողի բաժինը ընդգրկված չէ վերաապահովագրական ակտիվների կազմում, քանի որ այն ֆինանսական ակտիվ չէ:

36.2.1 Պարտքային ռիսկի առավելագույն չափը

Ընկերության ֆինանսական ակտիվների հաշվեկշռային արժեքը լավագույնս ներկայացնում է նրանց պարտքային ռիսկի առավելագույն ենթարկվածությունը՝ առանց հաշվի առնելու պահվող գրավը կամ պարտքի որակի բարելավման այլ միջոցներ:

36.2.2 Պարտքային ռիսկի առավելագույն չափի կենտրոնացումներ

Վարկանիշներ

Ստորև ներկայացված աղյուսակը տրամադրում է տեղեկատվություն Ընկերության պարտքային ռիսկի չափի վերաբերյալ 2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ դասակարգելով ակտիվները համաձայն գործընկեր կողմի վարկանիշների՝ ըստ միջազգային վարկանշային գործակալությունների:

Հազար ՀՀ դրամ

	A+	B++	BBB+	BBB	A	A-	AA-	Չվարկանշ- ված	Ընդամենը
Ապահովագրության գծով դեբիտորական պարտքեր	557	8	-	-	-	11,682	19,408	388,352	420,007
Վերաապահովագրակ ան ակտիվներ	126	-	-	-	135	1,921	5,540	4,001	11,723
Ֆիզիկական անձանց տրամադրած փոխառություններ	-	-	-	-	-	-	-	8,632	8,632
Պահանջներ ֆինանսական կազմակերպություններ ի նկատմամբ	-	-	-	-	-	-	-	2,189,413	2,189,413
Հետգնման պայմանագրերով գրավադրված արժեթղթեր	-	-	-	-	-	-	-	768,421	768,421
Վաճառքի համար մատչելի ներդրումներ	-	-	-	-	-	-	-	40,236	40,236
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	-	-	-	-	-	-	-	60,324	60,324
2017թ. դեկտեմբերի 31- ի դրությամբ	<u>683</u>	<u>8</u>	<u>-</u>	<u>-</u>	<u>135</u>	<u>13,603</u>	<u>24,948</u>	<u>3,459,379</u>	<u>3,498,756</u>
2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	<u>15,586</u>	<u>-</u>	<u>-</u>	<u>-</u>	<u>180</u>	<u>13,433</u>	<u>10,499</u>	<u>2,692,261</u>	<u>2,731,959</u>

36.2.3 Ռիսկի սահմանաչափերի վերահսկողություն և զսպողական քաղաքականություն

Ընկերությունն ունի պարտքային ռիսկի քաղաքականություն, որը գնահատում և սահմանում է, թե որն է համարվում Ընկերության համար պարտքային ռիսկ: Քաղաքականությունը կանոնավոր կերպով վերանայվում է ռիսկային միջավայրի փոփոխությունների հետ համապատասխանությունն ապահովելու նպատակով:

Վերաապահովագրությունն օգտագործվում է ապահովագրության ռիսկը կառավարելու նպատակով: Այնուամենայնիվ, սա չի ազատում Ընկերությանը իր հիմնական ապահովագրային պարտավորությունից: Եթե վերաապահովագրողը որևէ պատճառով չի կատարում պահանջի վճարում, ապա Ընկերությունը պարտավորվում է վճարել ապահովագրիին:

Վերաապահովագրությունը կատարվում է այն գործընկեր կողմերի հետ, որոնք ունեն դրական վարկային գնահատական, իսկ ռիսկի սահմանաչափից հնարավոր է խուսափել, հետևելով գործընկեր կողմերի սահմանափակումներին վերաբերող քաղաքականության ուղեցույցին, որը սահմանվում է ամեն տարի Խորհրդի կողմից և ենթակա է կանոնավոր վերանայման:

Վերաապահովագրողների վարկունակությունը հաշվի է առնվում տարեկան կտրվածքով վերանայելով ֆինանսական կայունությունը՝ պայմանագիրը վերջնական տեսքի բերելուց առաջ:

36.2.4 Արժեզրկում և պահուստավորման քաղաքականություն

Ֆինանսական ակտիվների արժեզրկման գնահատման հիմնական հատկանիշներն են մայր գումարի կամ տոկոսների վճարումների 90 օրից ավել ուշացումները, գործընկեր կողմերի հետ դրամական հոսքերի հետ կապված դժվարությունները, վարկային ռեյտինգների նվազումները, պայմանագրերի նախնական պայմանների խախտումները: Ընկերությունը արժեզրկման գնահատումը կատարում է անհատապես և խմբային եղանակով:

Ժամկետանց, բայց չարժեզրկված ակտիվներ

Ժամկետանց են համարվում այն ֆինանսական ակտիվները, որոնց գծով առկա են մի քանի օրյա չվճարումներ:

31.12.17թ. դրությամբ Ընկերությունը չունի ժամկետանց, բայց չարժեզրկված ֆինանսական ակտիվներ (2016թ.՝ ոչինչ):

Արժեզրկված ֆինանսական ակտիվներ

2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ արժեզրկված ֆինանսական ակտիվները կազմում են 196,414 հազար ՀՀ դրամ (2016թ.՝ 292,452 հազար դրամ):

Ժամկետանց կամ արժեզրկված ակտիվների համար գրավային ապահովածություն չի նախատեսվում:

36.3 Շուկայական ռիսկ

Շուկայական ռիսկն այն ռիսկն է, որ ֆինանսական գործիքների ապագա դրամական հոսքերը կամ իրական արժեքը կտատանվի այնպիսի շուկայական փոփոխականների պատճառով, ինչպիսիք են տոկոսադրույքները և արտարժույթի փոխարժեքները: Շուկայական ռիսկը ներառում է տոկոսադրույքի ռիսկը և արտարժույթի ռիսկը:

Արտարժույթների կենտրոնացումներից բացի, Ընկերությունը չունի շուկայական ռիսկի զգալի այլ կենտրոնացումներ:

36.4 Տոկոսադրույքի ռիսկ

Տոկոսադրույքի ռիսկը ծագում է այն հավանականությունից, որ տոկոսադրույքների փոփոխություններն ուղղակիորեն կազդեն Ընկերության ֆինանսական գործիքների հետ կապված դրամական միջոցների հոսքի և նրանց իրական արժեքի վրա:

Տատանվող դրույքների գործիքներն առաջացնում են դրամական հոսքերի տոկոսադրույքի ռիսկ, մինչդեռ հաստատուն տոկոսադրույքը Ընկերության մոտ առաջացնում է իրական արժեքի տոկոսադրույքի ռիսկ:

Ֆինանսական արդյունքների մասին հաշվետվության զգայունությունը տոկոսադրույքներում ենթադրվող փոփոխությունների ազդեցությունն է մեկ տարվա զուտ տոկոսային եկամտի վրա՝ 2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ հաշվեկշռում հաշվառվող տատանվող տոկոսադրույքով ոչ առևտրային ֆինանսական ակտիվների և պարտավորությունների գծով՝ ներառյալ հեջավորման գործիքների ազդեցությունը: Կապիտալի զգայունությունը հաշվարկվում է վերագնահատելով վաճառքի համար մատչելի հաստատուն տոկոսադրույքով ակտիվները, ներառյալ հեջերի և որպես դրամական հոսքերի հեջ բնորոշված սկիզբի ազդեցությունները, 2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ հիմք ընդունելով տոկոսադրույքների ենթադրվող փոփոխությունները:

Կապիտալի զգայունությունը վերլուծվում է ըստ ակտիվի կամ սկիզբի իրացման ժամկետների: Կապտիալ ընդհանուր զգայունությունը հիմնված է այն ենթադրության վրա, որ եկամտաբերության կորում կան զուգահեռ փոփոխություններ, մինչդեռ ըստ ժամկետների վերլուծությունը ցույց է տալիս զգայունությունը ոչ զուգահեռ փոփոխությունների նկատմամբ:

Հազար ՀՀ դրամ

2017

Արտարժույթ	Փոփոխություններ հիմնական տոկոսադրույքներում	Զուտ տոկոսային եկամտի զգայունություն	Կապիտալի զգայունություն				Ընդամենը
			Մինչև 6 ամիս	6 ամսից 1 տարի	1-ից 5 տարի	5 տարուց ավելի	
ՀՀ դրամ	+1	-	-	-	(35)	(38)	(73)
ՀՀ դրամ	-1	-	-	-	35	38	73

Հազար ՀՀ դրամ

2016

Արտարժույթ	Փոփոխություններ հիմնական տոկոսադրույքներում	Զուտ տոկոսային եկամտի զգայունություն	Կապիտալի զգայունություն				Ընդամենը
			Մինչև 6 ամիս	6 ամսից 1 տարի	1-ից 5 տարի	5 տարուց ավելի	
ՀՀ դրամ	+1	-	-	-	-	(27)	(27)
ՀՀ դրամ	-1	-	-	-	-	27	27

36.5 Արտարժույթի ռիսկ

Արտարժույթի ռիսկն այն ռիսկն է, որ ֆինանսական գործիքների արժեքը կտատանվի արտարժույթի փոխարժեքներում փոփոխությունների հետևանքով: Ղեկավարությունը սահմանել է սահմանաչափեր արտարժույթային դիրքերի համար:

Հետևյալ աղյուսակը ցույց է տալիս այն արտարժույթները, որոնք կարող են ազդել 2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերության ոչ առևտրային դրամային ակտիվների և

պարտավորությունների և դրանց կանխատեսված դրամական հոսքերի վրա: Վերլուծությունը հաշվարկում է արտարժույթի ՀՀ դրամի նկատմամբ հնարավոր տատանումների ազդեցությունը, այլ փոփոխականները հաստատուն մնալու պայմանով, շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվության վրա (կապված արտարժույթի նկատմամբ զգայուն ոչ առևտրային դրամային ակտիվների և պարտավորությունների իրական արժեքի փոփոխմամբ) և այլ համապարփակ եկամտի վրա: Աղյուսակում հանդիպող բացասական արժեքը արտացոլում է շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում/ում պոտենցիալ զուտ նվազում, մինչդեռ դրական արժեքը ցույց է տալիս պոտենցիալ զուտ աճ:

Հազար ՀՀ դրամ	2017		2016	
	Փոփոխություն արտարժույթի փոխարժեքում, տոկոս	Ազդեցությունը շահույթի վրա մինչև հարկումը	Փոփոխություն արտարժույթի փոխարժեքում, տոկոս	Ազդեցությունը շահույթի վրա մինչև հարկումը
Արտարժույթ				
ԱՄՆ դոլար	+10	(2,028)	+10	(312)
ԱՄՆ դոլար	-10	2,028	-10	312

Ընկերության արտարժույթի ռիսկի վերլուծությունն ըստ ֆինանսական ակտիվների և պարտավորությունների ունի հետևյալ տեսքը.

Հազար ՀՀ դրամ	Ազատ փոխարկելի ՌՀ փոխարկելի արժույթ			Ընդամենը
	ՀՀ դրամ	Ազատ փոխարկելի արժույթ	ՌՀ փոխարկելի արժույթ	
ԱԿՏԻՎՆԵՐ				
Ապահովագրության գծով դեբիտորական պարտքեր	417,631	2,376	-	420,007
Վերաապահովագրական ակտիվներ	11,723	-	-	11,723
Ֆիզիկական անձանց տրամադրած փոխառություններ	8,632	-	-	8,632
Պահանջներ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	2,189,413	-	-	2,189,413
Հետգնման պայմանագրերով գրավադրված արժեթղթեր	768,421	-	-	768,421
Վաճառքի համար մատչելի ներդրումներ	40,236	-	-	40,236
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	60,243	81	-	60,324
Ընդամենը ակտիվներ	3,496,299	2,457	-	3,498,756

Հազար ՀՀ դրամ

	ՀՀ դրամ	Ազատ փոխարկելի արժույթ	Ոչ փոխարկելի արժույթ	Ընդամենը
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ				
Ապահովագրական պարտավորություններ	212,173	-	-	212,173
Ապահովագրության գծով կրեդիտորական պարտքեր	78,484	22,392	-	100,876
Բանկերից ստացված վարկեր	100,656	-	-	100,656
Վարկեր ռեպո համաձայնագրերով	725,383	-	-	725,383
Ստորադաս փոխառություն	295,048	-	-	295,048
Այլ պարտավորություններ	70,588	348	-	70,936
Ընդամենը պարտավորություններ	1,482,332	22,740	-	1,505,072
Զուտ դիրք 2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2,013,967	(20,283)	-	1,993,684
Ընդամենը ֆինանսական ակտիվներ	2,731,880	79	-	2,731,959
Ընդամենը ֆինանսական պարտավորություններ	657,703	3,195	-	660,898
Զուտ դիրք 2016 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2,074,177	(3,116)	-	2,071,061

Ազատ փոխարկելի արտարժույթը հիմնականում ներկայացնում է ԱՄՆ դոլարը, բայց ներառում է նաև ՏՀԶԿ-ի երկրների արժույթները: Ոչ փոխարկելի գումարները վերաբերվում են ԱՊՀ երկրների արժույթներին, բացառությամբ Հայաստանի Հանրապետությանը: Չվաստակաձ ապահովագրավճարների պահուստում վերաապահովագրողի բաժինը ընդգրկված չէ վերաապահովագրական ակտիվների կազմում, քանի որ այն ֆինանսական ակտիվ չէ:

36.6 Իրացվելիության ռիսկ

Իրացվելիության ռիսկը կապված է նորմալ և սթրեսային իրավիճակներում Ընկերության ֆինանսական պարտավորությունները ժամանակին մարելու կարողության հետ: Այս ռիսկի զսպման նպատակով Ընկերությունը ներգրավում է լրացուցիչ ֆինանսական միջոցներ, ի լրումն իր հիմնական ավանդային բազայի, կառավարում է ակտիվները հաշվի առնելով իրացվելիության ռիսկը և վերլուծում է ապագա դրամական հոսքերը և իրացվելիությունը օրական կտրվածքով: Սա ներառում է նաև սպասվելիք դրամական հոսքերի գնահատումները և բարձր իրացվելի ապահովվածության հասանելիությունը, որն անհրաժեշտության դեպքում կարող է օգտագործվել լրացուցիչ ֆինանսավորում ստանալու նպատակով:

Ընկերությունը պահում է բարձր իրացվելի և ապակենտրոնացված ակտիվների պորտֆել, որը կարող է հեշտությամբ կանխիկացվել դրամական հոսքերի չկանխատեսված ընդհատման դեպքում: Իրացվելիության ռիսկը գնահատվում և կառավարվում է տարբեր սցենարների

դեպքում, հաշվի առնելով սթրես գործոնները կապված շուկայի հետ ընդհանրապես և Ընկերության հետ մասնավորապես:

Ընկերության իրացվելիության կառավարումը պահանջում է հաշվի առնել իրացվելի ակտիվների այն մակարդակը, որն անհրաժեշտ է պարտավորությունները մարելու համար ըստ ժամկետների, ապահովել ֆինանսավորման տարբեր աղբյուրների հնարավորությունը, ֆինանսավորման արտակարգ պլանի առկայությունը և վերահսկել հաշվեկշռային իրացվելիության նորմատիվները կանոնակարգային պահանջներին համապատասխան: Ընկերությունը հաշվարկում է իրացվելիության ցուցանիշները ՀՀ կենտրոնական բանկի պահանջներին համապատասխան:

Ընկերությունը օգտվել է ՖՀՄՍ 4 «Ապահովագրության պայմանագրերի-ի 39 հոդվածի դ կետի i. մասից՝ ՖՀՄՍ 7-ի 39-րդ պարագրաֆի «աե կետով պահանջվող մարման վերլուծության փոխարեն բացահայտելով տեղեկատվություն ճանաչված ապահովագրական պարտավորություններից առաջացող զուտ դրամական արտահոսքերի գնահատված ժամկետների վերաբերյալ 2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ: Տես ծանոթագրություն 35-ը այս պարտավորությունների մարման սպասվելիք ժամկետների համար:

Հազար ՀՀ դրամ	Հաշվեկշռային արժեք		Գնահատված չգեղչված զուտ դրամական հոսքեր	
	Մինչև 1 տարի	1 տարուց ավելի	Ընդամենը	
2017թ. դեկտեմբերի 31				
Ապահովագրական պարտավորություններ	212,173	212,173	-	212,173
Ընդամենը	<u>212,173</u>	<u>212,173</u>	<u>-</u>	<u>212,173</u>
2016թ. դեկտեմբերի 31				
Ապահովագրական պարտավորություններ	351,821	351,821	-	351,821
Ընդամենը	<u>351,821</u>	<u>351,821</u>	<u>-</u>	<u>351,821</u>

36.7 Գործառնական ռիսկ

Գործառնական ռիսկը ուղղակի կամ անուղղակի կորստի ռիսկն է, որն առաջանում է պատճառների լայն բազմազանությունից՝ կապված Ընկերության ֆինանսական գործիքների մեջ ներգրավվածության, գործընթացների, անձնակազմի, տեխնոլոգիաների և ենթակառուցվածքների հետ, և արտաքին գործոններից՝ բացառությամբ ապահովագրական, պարտքային, շուկայական և իրացվելիության ռիսկերի, ինչպիսիք են իրավական և կարգավորիչ պահանջները և կորպորատիվ վարքագծի ընդհանուր ընդունված չափանիշները:

Ընկերության նպատակն է կառավարել գործառնական ռիսկը՝ ֆինանսական վնասներից և հեղինակության կորստից խուսափումը հավասարակշռելով ռիսկի կառավարման ծախսային արդյունավետության հետ:

Գործառնական ռիսկի կառավարմանն ուղղված վերահսկողության մշակման և իրականացման հիմնական պատասխանատվությունը կրում է Խորհուրդը: Այս պատասխանատվությունը

ուղեկցվում է գործառնական ռիսկի կառավարման համար համընդհանուր չափանիշների մշակմամբ հետևյալ ոլորտներում՝

- պարտականությունների համապատասխան տարանջատման պահանջներ, այդ թվում գործարքների անկախ հաստատում,
- գործարքների համաձայնեցման և մոնիթորինգի պահանջներ,
- կարգավորիչ և այլ իրավական պահանջների համապատասխանեցում, ներառյալ ՀՀ ԿԲ ներքին վերահսկողության համակարգի վերաբերյալ նվազագույն պահանջները,
- վերահսկողական մեխանիզմների և ընթացակարգերի փաստաթղթավորում,
- առաջացած գործառնական ռիսկերի պարբերաբար գնահատման պահանջներ, ինչպես նաև ռիսկերի կառավարմանն ուղղված ընթացակարգերի համապատասխանություն,
- գործառնական կորուստների զեկուցման պահանջներ և առաջարկվող մեղմացուցիչ գործողություններ,
- արտակարգ իրավիճակների ծրագրերի մշակում,
- վերապատրաստում և մասնագիտական զարգացում,
- էթիկայի և գործարար չափանիշներ,
- ռիսկերի մեղմացում:

Ընկերության ստանդարտների համապատասխանությունը ուղեկցվում է ներքին աուդիտի կողմից իրականացվող պարբերական դիտարկումներով: Ներքին աուդիտի դիտարկումների արդյունքերը քննարկվում են Ընկերության ղեկավարության այն ներկայացուցչի հետ, որին դրանք վերաբերում են: Հաշվետվությունները ներկայացվում են Խորհրդին:

37 Ֆինանսական գործունեությունից դրամական հոսքերի համադրում

Հազար ՀՀ դրամ

	Բանկերից ստացված վարկեր	2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ստորադաս փոխառություն	Ընդամենը վարկերի ստացում
2017թ. հունվարի 1-ի դրությամբ	134,405	-	134,405
Դրամային հոսքերից	686,556	486,423	1,172,979
Վճարումներ	(928,043)	-	(928,043)
Ստացված գումար	1,614,599	486,423	2,101,022
Ոչ դրամային հոսքերից	5,078	(191,375)	(186,297)
Զեղջման արդյունք	5,078	(191,375)	(186,297)
2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	826,039	295,048	1,121,087

38 Կապիտալի համարժեքություն

Ընկերությունը պահպանում է ակտիվ կառավարվող կապիտալի կառուցվածք գործունեությանը բնորոշ ռիսկերը ծածկելու համար: Ընկերության կապիտալի համարժեքությունն այլ միջոցների հետ մեկտեղ վերահսկվում է նաև օգտագործելով ՀՀ կենտրոնական բանկի կողմից հաստատված կանոնները և նորմատիվները:

Ընկերության կապիտալի կառավարման առաջնային նպատակներն են համոզվել, որ Ընկերության կապիտալը համապատասխանում է հաստատված պահանջներին, և որ Ընկերությունը պահպանում է ամուր վարկային վարկանիշ և առողջ կապիտալի ցուցանիշներ՝ իր գործունեությունը ամրապնդելու և բաժնետերերի շահույթը առավելագույնի հասցնելու համար:

Ընկերությունը կառավարում է իր կապիտալի կառուցվածքը և իրականացնում համապատասխան ճշգրտումները տնտեսական պայմանների և իր գործունեության ռիսկերի փոփոխությանը համապատասխան: Կապիտալի կառուցվածքը պահպանելու կամ փոփոխելու համար Ընկերությունը կարող է փոփոխել բաժնետերերին վճարվող շահաբաժինների գումարը, կապիտալը վերադարձնել բաժնետերերին կամ բաժնետոմսեր թողարկել: Նախորդ տարիների համեմատ նպատակներում, քաղաքականությունում և գործընթացներում փոփոխություններ չեն եղել:

Ընդհանուր կապիտալը կազմված է հիմնական կապիտալից, որը ներառում է բաժնետիրական կապիտալը, չբաշխված շահույթը, այդ թվում ընթացիկ տարվա շահույթը, գլխավոր պահուստը: Ընդհանուր կապիտալը հաշվարկվում է ՀՀ կենտրոնական բանկի պահանջներին համապատասխան: Կապիտալի մեկ այլ բաղադրիչ է երկրորդային կապիտալը, որը ընդգրկում է վերագնահատման պահուստները:

ՀՀ կենտրոնական բանկի կողմից ընդհանուր կապիտալի և վճարունակության պահանջվող մեծության ու ռիսկով կշռված ակտիվների մեծության հանրագումարի միջև սահմանային հարաբերակցությունը սահմանվում է 100%:

Հաշվետու տարվա ընթացքում Ընկերությունը պահպանել է կապիտալի համարժեքության նկատմամբ բոլոր պահանջները:

2017 և 2016թթ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ընդհանուր կապիտալը, ռիսկով կշռված ակտիվները, վճարունակության պահանջվող մեծությունը և կապիտալի համարժեքության դրույքաչափի հաշվարկը՝ համաձայն ՀՀ կենտրոնական բանկի պահանջների, ներկայացված է ստորև.

Հազար ՀՀ դրամ	2017 (աուդիտ չարված)	2016 (աուդիտ չարված)
Հիմնական կապիտալ	1,346,508	1,575,377
Լրացուցիչ կապիտալ	466,126	17,186
Ընդամենը՝ ընդհանուր կապիտալ	1,812,634	1,592,563
Ռիսկով կշռված ակտիվներ	294,770	309,962
Վճարունակության պահանջվող մեծություն	731,012	750,945
Կապիտալի համարժեքության նորմատիվ (Ն1.2 նորմատիվ)	177%	150%

2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ՀՀ կենտրոնական բանկի կողմից սահմանվում է ընդհանուր կապիտալի նվազագույն չափ 1,500,000 հազար ՀՀ դրամ գումարով: